

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԵԼՄԱՆԻ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԵՐԵՐԻ ՀԱՎԱԶՄԱՆ ՈՒ ԿՈՒՏԱԿՄԱՆ
ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՒՄԱԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ե.20.01- «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ»
մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտա-
կան աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

НАЦИОНАЛЬНЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

АКОПЯН ОГАНЕС ТЕЛЬМАНОВИЧ

**ПРОБЛЕМЫ РАЗРАБОТКИ ЭФФЕКТИВНЫХ ТЕХНОЛОГИЙ УБОРКИ И
ЗАГОТОВКИ КОРМОВ И ПОВЫШЕНИЯ ЭКСПЛУАТАЦИОННОЙ
НАДЕЖНОСТИ МАШИН В ГОРНЫХ УСЛОВИЯХ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора технических наук по
специальности 05.20.01 - «Механизация сельскохозяйственного производства
и машины»

ЕРЕВАН - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի կողմից

Գիտական խորհրդատու՝ տ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Պ.ԹԱՐՎԵՐԳՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տ.գ.դ. Շ.Մ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
տ.գ.դ. Ս.Ա.ԿՈՒԽԻԿՅԱՆ
գ.գ.դ. Ա.Շ.ՍԵԼԻԲՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Շահումյանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. փետրվարի 16-ին, ժամը 14⁰⁰-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ԲՈՀ-ի 033 «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտական խորհրդում, հետևյալ հասցեով. 0009, ք.Երևան, Տերյան 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀԱԱՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. հունվարի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, տեխն.գիտ.դոկտոր՝

Ա.Կ.ԱՄԻՐՅԱՆ

Тема диссертации утверждена ученым советом Национального аграрного университета Армении

Научный консультант: д.т.н., академик НАН РА А.П.ТАРВЕРДЯН

Официальные оппоненты: д.т.н. Ш.М. ГРИГОРЯН
д.т.н. С.А. КОХЛИКЯН
д.с.х.н. А.Ш.МЕЛИКЯН

Ведущая организация: ОАО Шаумянский «Агросервис» РА

Защита диссертации состоится 16-го февраля 2016 г. в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 033 ВАК-а - «Механизация сельского хозяйства» при Национальном аграрном университете Армении по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна 74.

С диссертацией можно ознакомиться в библиотеке НАУ Армении.

Автореферат разослан 14-го января 2016 г.

Ученый секретарь специализированного
совета, доктор техн.наук

А.К. АМИРЯН

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՍԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հայաստանի հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը բարձր չէ, որովհետև շատ արժեքավոր կերատեսակների բացակայության պատճառով նրանց լիարժեք չեն կերակրում: Սենաժ բոլորովին չի արտադրվում, սիրուսի, ճակնդեղի ու խտացրած կերերի արտադրությունը համապատասխանաբար կազմում են պահանջարկի 0,4, 2,7 և 70 %-ը: Ծղոտը ճիշտ չի մշակվում՝ թաղանթանյութը քայքայման չեն ենթարկում, սննդարարությունն ու ուտելիությունը չեն բարձրացնում:

Սենաժի ու սիրուսի պատրաստման, ծղոտի թաղանթանյութի քայքայման պարզագույն և քիչ ծախսեր պահանջող տեխնոլոգիաների ու մեքենասարքավորումների, ինչպես նաև լեռնային պայմաններում կերերի հավաքման արդյունավետ տեխնոլոգիաների մշակումը և մեքենաների շահագործական հուսալիության ու արտադրողականության բարձրացումը հանրապետությունում արդիական և հրատապ հիմնախնդիրներ են:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Աշխատանքի նպատակն է մշակել հանրապետությունում կերային բազայի ամրապնդման ու բալանավորման միջոցառումներ: Դրանց իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները. վերլուծել ու գնահատել բոլոր կերատեսակների արտադրության, նախապատրաստման ու կուտակման այժմ կիրառվող տեխնոլոգիաները, դրանք կատարելագործել, ընտրել կերերի հավաքման մեքենաների լավագույն համալիրները, փորձարկել բարձր լեռնային բնական քարքարոտ, գուղձերով ու թփուտներով պատված խոտհարքներում, հետազոտել ու պարզաբանել մեքենաների շահագործական ցուցանիշները, հատկապես հուսալիությունը, մշակել մեթոդներ դրանց հուսալիությունը, երկարակեցությունն ու արտադրողականությունը բարձրացնելու համար: Միաժամանակ մշակել ու նախագծել սենաժի ու սիրուսի պատրաստման և ծղոտի քիմիական մշակման ամբարներ և համապատասխան մեքենասարքավորումներ: Տեսական և գիտափորձական ճանապարհով որոշել և օպտիմալացնել դրանց կառուցվածքային ու շահագործատեխնոլոգիական պարամետրերը, փորձարկել արտադրական պայմաններում, այնուհետև մշակել մեթոդներ և տալ համապատասխան կերատեսակների արտադրության ու կուտակման տնտեսական հիմնավորումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏԸ: Տարբեր կերատեսակների հավաքման, նախապատրաստման ու կուտակման տեխնոլոգիական գործընթացները և ընտրված ու փորձարկված մեքենաների համալիրները, ինչպես նաև նոր նախագծված ու փորձարկված ամբարներն ու նոր մշակված տեխնոլոգիաներն ու մեքենասարքավորումները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Օգտագործվել են գիտական հետազոտությունների կատարման մշակված ու փորձարկված մոտեցումները, հիդրոդինամիկական, ֆիզիկական ու մաթեմատիկական մոդելավորման, առաձգականության տեսության, մաթեմատիկական վերլուծության և հավանականության տեսության ու մաթեմատիկական վիճակագրության, ինչպես նաև գիտափորձերի պլանավորման տեսությունը:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Վերլուծվել և մշակվել են հանրապետությունում կերային բազայի ամրապնդման ու ըստ կերատեսակների բալանսավորման տեխնիկատեխնոլոգիական միջոցառումներ:

Մշակվել են քարքարոտ, գուղձերով ու թփուտներով պատված և քարերից հավաքված բնական խոտհարքներում խոտի, սենածի ու սիլոսի կանաչ զանգվածի հավաքման արտադրությունում կիրառվող մեքենաների ու փոխադրամիջոցների համալիրների շահագործական ցուցանիշների որոշման, ինչպես նաև հուսալիության վրա ազդող պատճառների բացահայտման ու մեքենաների հուսալիության և արտադրողականության բարձրացման մեթոդներ:

Առաջարկվել են մեթոդներ և որոշվել լեռնային բնական խոտհարքներից կերերի փոխադրամիջոցների շահագործական ցուցանիշները, որոնց հիման վրա կառուցվել են փոխադրամիջոցների և բարձող ու բեռնաթափող բանվորների աշխատանքի ժամային ծանրաբեռնվածության գրաֆիկներ, որոնք հնարավորություն են տվել այնպես կազմակերպել սպասարկող բանվորների ու փոխադրամիջոցների աշխատանքը, որպեսզի նվազագույն պարապյուրդներով իրականացվեն խոտի հավաքման ու տեղափոխման աշխատանքները:

Կատարելագործվել են սենածի ու սիլոսի պատրաստման տեխնոլոգիաները՝ երկաթբետոնե թանկարժեք ամբարները փոխարինվել են ծղոտի հակերով ու պոլիէթիլենային թաղանթով պատրաստված նվազագույն ծախսեր պահանջող ամբարներով, մշակվել են նաև փոշենման ու հեղուկ օրգանական թթուները սենածացվող և սիլոսացվող զանգվածների մեջ չափավորված ու հավասարաչափ ներարկող մեքենասարքավորումներ:

Մշակվել է ծղոտի քիմիական մշակման նոր տեխնոլոգիա՝ ИГК-30Б ծղոտամանրիչ մեքենան վերակառուցվել է, այն ծղոտը մանրացնում, միաժամանակ կաուստիկ սոդայով թրջում ու լցնում է ծղոտի հակերով պատրաստված ամբարի մեջ և պոլիէթիլենային թաղանթով ծածկվում է:

Որոշվել է նոր առաջարկված տեխնոլոգիաների, կերամբարների ու կատարելագործված մեքենասարքավորումների և կերհավաք մեքենաների համալիրների շահագործման տնտեսական արդյունավետությունը:

Նոր մշակված տեխնոլոգիաների ու մեքենասարքավորումների համար որպես նորություն ստացվել են. ԽՍՀՄ մեկ հեղինակային վկայական և ՀՀ երկու արտոնագրեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Գործնական նշանակություն ունեն.

- կերհավաք մեքենաների ու փոխադրամիջոցների անհրաժեշտ համակազմի հաշվարկման և ընտրության մեթոդներն ու դրանց շահագործման եղանակները, կերերի կուտակման գործընթացների տեխնոլոգիական պահանջները, արտադրության պայմաններում մեքենաների հետազոտությունների արդյունքում բացահայտված ու դասակարգված թույլ հանգույցներն ու մեքենամասերը, դրանց հուսալիության ու երկարակեցության բարձրացման եղանակները,

- սենածի ու սիլոսի ամբարները և փոշենման ու հեղուկ օրգանական թթուները կանաչ զանգվածի մեջ ներարկող մեքենասարքավորումները, ամբարի պատերի կայունության և թթուները ներարկող մեքենասարքավորումների կառուցվածքային պարամետրերի ու շահագործման ռեժիմների հաշվարկման մեթոդները, այդ մեքենաների նախագծման սկզբունքներն ու ելակետային տվյալները,

- ծղոտի քիմիական մշակման համար նոր համակարգը, պարամետրերի հաշվարկման մեթոդներն ու հետազոտությունների արդյունքները,

- առաջարկվող տեխնոլոգիաների ու մեքենաների ներդրման տնտեսական արդյունավետության հիմնավորման մեթոդները և արդյունքները:

ՀՏԱՁՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.

- խոտի ու սիլոսացվող կանաչ զանգվածի հավաքման մեքենաների համալիրի հետազոտությունների արդյունքներն օգտագործվել են. ՀԱԱՀ Բալահովխոի ուսումնափորձարարական տնտեսության և Արմավիրի մարզի Արագածի համայնքում ՎՏՎ Ագրո ՄՊ ընկերության մեքենատրակտորային հավաքակալայաները նոր մեքենաներով համալրելու գործընթացում, բնական խոտհարքների տարածքների ագրոտեխնիկական բարելավման աշխատանքները կազմակերպելու ու մեքենաների շահագործական հուսալիության բարձրացման, ինչպես նաև կերհավաք մեքենաների արդյունավետ համակարգը ճշտելու և պահեստամասերի անհրաժեշտ տեսականին ու քանակն ապահովելու համար,

- առաջարկված սիլոսացման տեխնոլոգիան ՀԱԱՀ Բալահովխոի ուսումնափորձարարական տնտեսության կաթնապրանքային ֆերմայում 2010 թ. հաշտոնությամբ անցել է արտադրական փորձարկումները և փորձարկող հանձնաժողովի կողմից երաշխավորվել է ներդրման: Միլոսի պատրաստման նոր տեխնոլոգիան և օպտիմալ պարամետրերով սիլոսամբարը 2011 թ. ներդրվել է Արմավիրի մարզի Արագածի համայնքում՝ ՎՏՎ Ագրո ՄՊԸ տնտեսությունում,

- ծղոտի քիմիական մշակման տեխնոլոգիական գիծը Բալահովխոի տնտեսությունում հաջողությամբ անցել է արտադրական փորձարկումները և երաշխավորվել ներդրման,

- միաժամանակ ատենախոսական աշխատանքին վերաբերող նյութերն արտացոլված են «Գյուղատնտեսական մեքենաներ» ու «Անասնապահական ֆերմաների մեքենայացում» առարկաների ուսումնական ծրագրերում և օգտագործվում են դասավանդման ժամանակ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՊՐՈՔԱՑԻԱՆ: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները գեկուցվել և հավանության են արժանացել «Գյուղատնտեսության էկոլոգիական հիմնախնդիրները» (2007 թ.), «Հարավկովկասյան տարածաշրջանի ջրային պաշարների պահպանման և օգտագործման հիմնախնդիրները» (2008 թ.), «Հնդկային պաշարների օգտագործման և կառավարման հիմնախնդիրները» (2009 թ.), «Հայաստանի պետական ագրարային համալսարանի հիմնադրման 80-ամյակին նվիրված» (2010թ.), «Գյուղատնտեսության էկոլոգիական և օրգանական ժամանակակից հիմնախնդիրները» (2011թ.), «Գյուղատնտեսության մեքենայացման և մեքենաշինության հիմնախնդիրը» (2012 թ.), «Պարենային անվտանգության և կենսաբազմազանության հիմնախնդրի վերաբերյալ» (2013թ.), «Սննդի անվտանգության և պարենային ապահովվածության հիմնախնդիրները» (2014թ.) միջազգային գիտաժողովներում, «Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում» ամբիոնի սեմինար խորհրդակցություններում (2007-2014թ.թ.) և ընդլայնված նիստում (2015թ.):

ՀՏԱՁՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄԸ: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են 35 գիտական աշխատանքներում և 3 գյուտի հեղինակային վկայականում և արտոնագրերում: Դրանցից 16-ը հրատարակվել են արտասահմանյան երկրներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 6 զլուխներից, ընդհանուր եզրակացություններից ու

առաջարկություններից, օգտագործված գրականության ցուցակից՝ 188 անվանումով և 35 հավելվածներից: Այն շարադրված է 292էջի վրա, ընդգրկում է 174 նկար և 44 աղյուսակ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆ-ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացված են կերերի հավաքման, մշակման ու ամբարման տեխնոլոգիաների և մեքենասարքավորումների արդի վիճակը, դրանց կատարելագործման և արդյունավետության բարձրացման ամփրամշտությունն ու հիմնական ուղղությունները, հիմնավորված է թեմայի արդիականությունը և բերված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին բաժնում վերլուծված են. անասնապահության կերային բազայի ու բնական խոտհարքների վիճակը և բարելավման հնարավորություններն ու ուղիները և առաջադրված են լեռնային պայմաններում կերհավաք մեքենաների շահագործման ցուցանիշների, արտադրողականության ու հուսալիության բարձրացման խնդիրները:

Մշակվել և ձևակերպվել են եզրակացություններ և հետազոտությունների նպատակն ու խնդիրները:

Երկրորդ բաժինը նվիրված է խոտի հավաքման մեքենաների ու փոխադրամիջոցների օպտիմալ տարբերակների ընտրությանը և տեխնոլոգիաշահագործական պարամետրերի հիմնավորմանը:

Բնական բարձրադիր խոտհարքները և արոտավայրերը պատված են քարերով, քփուտներով, գուղձերով ինչի հետևանքով առաջանում են հնձիչների, փոցիւերի և մամիչների տարբեր բնույթի խափանումներ: Դրանք բացասաբար են ազդում մեքենաների հուսալիության, արտադրողականության ու ազդոտելնիկական ժամկետների պահպանման վրա: Հետևաբար, խնդիր է դրվել Գեղամա լեռնաշղթայի «Ելիջա» տարածքի օրինակով ուսումնասիրել բարձր լեռնային պայմաններում կերհավաք մեքենաների ու փոխադրամիջոցների շահագործման առանձնահատկությունները, վեր հանել դրանց արտադրողականության վրա ազդող բացասական գործոնները և միջոցառումներ մշակել տեխնիկական հնարավորությունների արդյունավետ օգտագործմանը:


Խոտհնձի համար ընտրվել են Ռուսաստանի Դաշնության արտադրության լեռնային մոդիֆիկացիայի KC-2, 1Գ և իտալական արտադրության “Holland” 55-56 (FD-2.10) հնձիչները, խոտը լասավորելու համար՝ ԳՈՍ-6,0Դ լայնակի գործողության փոցիւր, խոտը հակավորելու համար՝ ՍԸ-1,6 հավաքիչ-մամիչը: Այս մեքենաները երկար տարիներ աշխատում են հանրապետության տարբեր գոտիների խոտհարքներում: Խոտի տեղափոխման համար ընտրվել են ԴԱ3-53Ա, ՅՄԼ-130, ԿամԱ3 55111-02 և Կրալ 4320 բեռնատար ավտոմոբիլները:

Խոտի հավաքման մեքենաների շահագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախնական գիտափորձերով որոշվել են հնձված խոտաբույսերի խոնավության և քաշի փոփոխության օրինաչափությունները (նկ. 1):

Ստացվել են խոտաբույսի ընթացիկ կշիռների ու խոնավության փոփոխության որոշման փորձնական արտահայտությունները.

$$G_{\text{նրբ}} = -0.001T^4 + 0.0628T^3 - 1.3164T^2 + 9.7582T, \quad R^2 = 0.9999, \quad (1)$$

$$W_{\text{միջ}} = -0.0071T^4 + 0.4168T^3 - 8.2625T^2 + 56.528T, \quad R^2 = 0.9997: \quad (2)$$



Նկ. 1. Օրվա ընթացքում միջավայրի ջերմաստիճանի ($t_{օր}$), խոտաբույսի ընթացիկ կշռի ($C_{օր}$) և խոնավության ($W_{օր}$) փոփոխությունների օրինաչափությունները կախված օրվա տևողությունից ($T_{օր}$):

Գրաֆիկը (նկ. 1) և (1), (2) արտահայտությունները հնարավորություն են տալիս որոշել հնձելուց հետո տվյալ կերատեսակը (խոտ, սենամ, սիլոս և այլն) պատրաստելու համար օպտիմալ ժամկետները: Օրինակ, սիլոս պատրաստելու համար պետք է հնձաչերտը հավաքել մոտ 70% խոնավության ժամանակ: Գրաֆիկից հետևում է, որ այդ դեպքում սիլոսացման համար կանաչ զանգվածը պետք է հավաքել հնձելուց մոտ 1 ժամ 12 րոպե հետո:

Չափվել են ԴՄՄ-6,0Դ փոցխի ձևավորած լասերի լայնությունը, բարձրությունը, միավոր երկարության կշիռը, միջլասային հեռավորությունը:

Ստացվել են 6 փոփոխական մեծություններ, որոնցից հետաքրքրություն են ներկայացնում 3-ը՝ լասի լայնությունը՝ X_1 , լասի մեկ զձամետրի զանգվածը՝ X_2 և խոտհարքների բերքատվությունը՝ X_3 :

Որոշվել են ցուցանիշների միջին արժեքները համապատասխան փոփոխականների համար՝ $\bar{X}_1 = 1,08$ մ, $\bar{X}_2 = 2,97$ կգ/մ, $\bar{X}_3 = 29,95$ ց/հա, յուրաքանչյուր ցուցանիշի համար միջին քառակուսային շեղումը՝ $\sigma_1 = 0,12$ մ, $\sigma_2 = 0,27$ կգ/մ, $\sigma_3 = 2,29$ ց/հա և վարիացիայի գործակիցը՝ $v_1 = 0,11$, $v_2 = 0,09$, $v_3 = 0,08$:

Ստացված տվյալների մշակման արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել կարգավորել լայնական ԴՄՄ-6,0Դ փոցխի արդյունավետ շահագործման ռեժիմները. լասի լայնությունը՝ 1,0-1,2 մ, լասավորող ագրեգատի բանվորական արագությունը՝ 7-8 կմ/ժ:


Գիտավորձերով բացահայտվել են ՄԸ-1,6 մամիչ-հավաքիչի երկու ցուցանիշները. հակերի զանգվածը՝ X_1 , և խոտությունը՝ X_2 : Որոշվել են դրանց միջին թվաբանական արժեքները՝ $X_1 = 20$ կգ, $X_2 = 132$ կգ/մ³, միջին քառակուսային շեղումները՝ $\sigma_1 = 2,91$ կգ, $\sigma_2 = 20,21$ կգ/մ³ և վարիացիայի գործակիցները՝ $v_1 = 0,15$, $v_2 = 0,15$: Հաշվարկների արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել կարգավորել ՄԸ-1,6 մամիչ-հավաքիչի արդյունավետ շահագործման ռեժիմները:

Գործնական առաջարկություն է արված՝ կարգավորել հակերի խոտությունը՝ 100-150 կգ/մ³ և հակերի զանգվածը՝ 18-22 կգ-ի սահմաններում:

Խոտհարքների բարդ ռելիեֆային, քարերով, թփուտներով ու գուղձերով պատված պայմաններում խոտի հավաքման լավագույն ու հուսալի մեքենաներ ընտրելու համար հիմնավորվել են խոտի հավաքման ու փոխադրման տեխնոլոգիական գործընթացների և տեխնիկայի գնահատման չափանիշները: Մինչև քարհավաքը և դրանից հետո արդյունքներն ամփոփված են ատենախոսությունում:

Հերթափոխի ժամանակի օգտագործման գործակիցը քարերի առկայության և բացակայության դեպքերում. КС-2,1Г խոտհնձիչի համար՝ $\tau = T_w/T_h = 0,62$ և $0,70$, “Holland” 55-56 (FD-2,10) խոտհնձիչի համար՝ $\tau = 0,55$ և $0,67$, ГПП-6,0Г խոտի լայնակի փոցխի համար՝ $\tau = 0,57$ և $0,72$, ПС-1,6 մամլիչ-հավաքիչի համար՝ $\tau = 0,62$ և $0,69$: Ունենալով աղյուսակներում ամփոփված տվյալները որոշվել են ագրոտեխնիկական ժամկետում խոտհարքներից խոտի հավաքման մեքենաների անհրաժեշտ թիվը: Հաշվարկվել են նաև խոտի փոխադրամիջոցների շահագործական ցուցանիշները:

Լեռնային բնական խոտհարքների բարդ ու թեքաղիք ռելիեֆային պայմաններում կերերը դաշտից փոխադրելու համար իրենց լավ են դրսևորել ЗИЛ-130, ГАЗ-53А, КамАЗ 55111-02 ու 55111-13, Урал 4320 ավտոմոբիլները: Դրանց հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ Բալախովիտի ուսումնասիրման և տնտեսության ունեցած տարբեր մակնիշների 4 փոխադրամիջոցներով կարելի է օրական բնական խոտհարքներից տեղափոխել և ամբարել մոտ 32 տ խոտ: Դա նշանակում է, որ համարյա ամեն տարի հավաքվող մոտավորապես 900-1100 տ խոտը հնարավոր է տեղափոխել մոտավորապես 30 օրում:



Նկ. 2. Փոխադրամիջոցների և բարձող ու բեռնաթափող բանվորների աշխատանքի ժամային ծանրաբեռնվածության գրաֆիկները. t_н՝ խոտհարք տեղափոխելու, t_р՝ բեռնման, l_н՝ ամբարման տեղամաս տեղափոխվելու, l_{рр}՝ բեռնաթափվելու, t_պ՝ պարապուրդների տևողությունները:

Որպեսզի փոխադրամիջոցներն ու բարձող բանվորները պարապուրով չաշխատեն՝ բոլոր փոխադրամիջոցները դաշտում իրար կողքի չկուտակվեն, և բանվորների թիվը չավելացնել, կառուցվել են փոխադրամիջոցների ու բարձող բանվորների աշխատանքի ռացիոնալ կազմակերպման ծանրաբեռնվածության գրաֆիկներ (նկ. 2):

Գրաֆիկները ներկայացնում են բարձող բանվորների առաջին խմբին կցված ԴԱ3-53A ու ԿրաՄ 4320 և երկրորդ խմբին կցված ՅՄԼ-130 ու ԿաՄԱ3 55111-02 փոխադրամիջոցների առանձին գույգերի աշխատանքի փոխադարձ կապը:

Խոտի պատրաստման, սիլոսացման, սենաժացման կամ խոտայտուրի պատրաստման նպատակով խոտաբույսեր հավաքող ու փոխադրող ագրեգատները բերքահավաքի շրջանում կատարում են մեծ ծավալի դաշտային և փոխադրական աշխատանքներ: Ուստի, դրանց համաձայնեցված փոխադրծողության ապահովման առումով, շահագործական պարամետրերի օպտիմալացումն ունի կարևոր տնտեսական նշանակություն:

Փոխադրադաշտային ագրեգատների (ՓԴԱ) արտադրողականությունը որոշվում է փոխադրական աշխատանքների միավորով արտահայտված.

$$Q = Q_0 \tau, \quad (3)$$

որտեղ Q_0 -ը փոխադրամիջոցի մաքուր ժամային արտադրողականությունն է (տկմ/ժ), τ -ն՝ հերթափոխի ժամանակի օգտագործման գործակիցը:

Սենաժի, սիլոսի կամ խոտայտուրի պատրաստման նպատակով խոտաբույսը մանրացված վիճակում հավաքելու ու փոխադրելու դեպքում Q_0 -ը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել կերերի կուտակման տեղամասից դատարկ փոխադրամիջոցը $L_{\text{դտ}}$ հեռավորության վրա խոտհարք տեղափոխման $T_{\text{դտ}}$, հնձող ու մանրացնող ինքնագնաց մեքենան փոխադրամիջոցին L_p հեռավորության վրա m_p կերային զանգվածի բարձման T_p , բեռնված ինքնաթափ փոխադրամիջոցը $L_{\text{տ}}$ հեռավորության վրա m_p զանգվածի տեղափոխման $T_{\text{բտ}}$, կշռելու և սենաժի կամ սիլոսի ամբարում կամ խոտայտուրի արտադրամասում բեռնաթափման $T_{\text{կբ}}$ ժամանակները: Այդ դեպքում՝

$$Q_0 = \left[A_{\text{տր}} + m_p L_{\text{բտ}} \right] / (T_{\text{դտ}} + T_p + T_{\text{բտ}} + T_{\text{կբ}}): \quad (4)$$

L_p ճանապարհի վրա կերային զանգվածի հավաքման և փոխադրամիջոցին բարձման ՓԴԱ-ի փոխադրական աշխատանքը որոշվում է հետևյալ արտահայտությունից՝

$$A_{\text{տր}} = \int_0^{L_p} B q_p L_p dL_p = 0,5 B q_p L_p^2, \quad (5)$$

որտեղ B -ն ինքնագնաց մեքենայի ընդգրկման լայնությունն է (մ), q_p -ն՝ խոտհարքի բերքատվությունը (կգ/մ²), L_p -ն՝ անցած ճանապարհի ընթացիկ արժեքը (մ):

Հաշվի առնելով, որ $B q_p L_p = m_p = \Omega \rho \gamma$, L_p -ն ներկայացվել է հետևյալ տեսքով՝

$$L_p = \Omega \rho \gamma / (B_i \beta q_p) = \omega \rho \gamma / (q_p \beta): \quad (6)$$


որտեղ Ω -ն փոխադրամիջոցների լրիվ ծավալն է (մ³), ρ -ն՝ մանրացված խոտաբույսի ծավալային զանգվածը (կգ/մ³), γ -ն՝ լցման գործակիցը, $\beta = B/B_i$ -ն՝ ընդգրկման կառուցվածքային լայնության օգտագործման գործակիցը:

Կատարելով համապատասխան ձևափոխություններ ու լուծումներ, ստացվել է կանաչ զանգվածի հավաքման և կուտակման ՓԴԱ-ների արտադրողականության հաշվարկման հետևյալ արտահայտությունը՝

$$Q = \frac{\Omega \rho \gamma \left(L_{\text{բա}} + \frac{\omega \rho \gamma}{2q_p \beta} \right)}{\frac{L_{\text{բա}}}{V_{\text{բա}}} + \frac{\Omega \rho \gamma}{0,1 B_q V_{\text{հմ}}} + \frac{L_{\text{բա}}}{V_{\text{բա}}} + 0,5} \cdot \frac{T_h - T_{\text{հմ}} - T_{\text{սա}} - T_l}{T_h} \text{ սկմ/ժ:} \quad (7)$$

Ստացված արտահայտությունը (7), կապ է հաստատում մի շարք պարամետրերի միջև: Լուծվել է օրինակ:

Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում խոտի հավաքման ժամանակաշրջանում երկար ժամանակ անձրևներ են տեղում: Բարձր խոնավությամբ կանաչ զանգվածը հնարավոր չի լինում չորացնել ու հակավորել: Այդ դեպքում առաջարկվում է բարձր խոնավությամբ կանաչ զանգվածը խառնել ծղոտի հետ և պահածոյացնել ծղոտի հակերով պատրաստված ամբարների մեջ:



Նկ. 3. Առանցքի նկատմամբ բերված թիակներով կերազանգվածի շարժման հաշվարկային սխեմա:

խույս՝ $m r \omega^2$, գլանի ներքին մակերեսի ու կերազանգվածի միջև շփման ուժը՝ $f N$, կորիովիսային ուժը՝ $2 m r \omega V_r$, միջավայրի դիմադրության ուժը՝ $k V_r$ (k -ն միջավայրի դիմադրության գործակիցն է), կորիովիսային շփման ուժը՝ $2 m f \omega V_r$:

Պրոյեկտելով բոլոր ուժերը թիակի առանցքի նկատմամբ ուղղահայաց, ստացվել է հետևյալ դիֆերենցիալ հավասարումը.

$$m \dot{V}_r = m r \omega^2 \cos(\alpha - \beta) + m g \cos \alpha - f N: \quad (8)$$

Հավասարումը (8) ձևափոխելուց և մի շարք մաթեմատիկական գործողություններ կատարելուց հետո, ստացվել են.


$$\eta(t) = \left[\frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \cdot \frac{\lambda_2}{\omega} + \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + 4n^2)} + c \frac{\lambda_2}{\omega^2} \right] \cdot \frac{e^{-\lambda_1 t}}{\lambda_1 + \lambda_2} + \left[\frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \cdot \frac{\lambda_1}{\omega} - \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + 4n^2)} + c \frac{\lambda_1}{\omega^2} \right] \cdot \frac{e^{-\lambda_2 t}}{\lambda_1 + \lambda_2} - \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + 4n^2)} \sin \omega t - \frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \cos \omega t - \frac{c}{\omega^2}, \quad (9)$$

$$V_r = \dot{\eta}(t) = \left[\frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \cdot \frac{\lambda_2}{\omega} + \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + 4n^2)} + c \frac{\lambda_2}{\omega^2} \right] \cdot \frac{\lambda_1 \cdot e^{-\lambda_1 t}}{\lambda_1 + \lambda_2} + \left[\frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \cdot \frac{\lambda_1}{\omega} - \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + 4n^2)} + c \frac{\lambda_1}{\omega^2} \right] \cdot \frac{\lambda_2 e^{-\lambda_2 t}}{\lambda_1 + \lambda_2} - \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + 4n^2)} \cos \omega t + \frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \sin \omega t: \quad (10)$$

Ստացված հավասարումներում՝ (9) և (10), $\eta(t)$ -ն ցույց է տալիս ըստ պտուտակի թիակի առանցքի ուղղությամբ մասնիկի տեղափոխությունը, իսկ $\dot{\eta}(t) = V_r(t)$ -ն մասնիկների տեղափոխության արագությունը:

Ստացվել է նաև ազդող ուժերի հավասարումը.

$$P(t) = m \left\{ \left[\frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \cdot \frac{\lambda_2}{\omega} + \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + n^2)} + c \frac{\lambda_2}{\omega^2} \right] \frac{\lambda_1^2 \cdot e^{-\lambda_1 t}}{\lambda_1 + \lambda_2} + \left[\frac{2an - b\omega}{\omega(\omega^2 + 4n^2)} \cdot \frac{\lambda_1}{\omega} - \frac{a\omega + 2bn}{\omega(\omega^2 + 4n^2)} + c \frac{\lambda_1}{\omega^2} \right] \frac{\lambda_2^2 e^{-\lambda_2 t}}{\lambda_1 + \lambda_2} - \frac{a\omega + 2bn}{(\omega^2 + 4n^2)} \cos \omega t + \frac{2an - b\omega}{(\omega^2 + 4n^2)} \sin \omega t \right\} \cos \gamma \cos(\alpha - \beta), \quad (11)$$



Նկ. 4. Հաշվարկային սխեմա:

Կառուցվել է գրաֆիկ՝ շնեկի առանցքի ուղղությամբ ազդող ուժերի մեծության կախվածությունը անկյունային արագությունից:

Շնեկաթիակային խառնիչի գլանի ներքին մակերեսի վրա գործող ճնշման մեծության հաշվարկային սխեման բերված է նկ. 4-ում:

Պրոյեկտելով բոլոր ուժերը $\varphi(t)$ պտույտից հետո ըստ $N(t)$ ուղղության (որտեղ $N(t)$ -ն նորմալ դինամիկական ուժի մեծությունն է), ստացվել է.

$$m\ddot{r} \cos \varphi(t) - 2mr\dot{\phi}(t) \sin \varphi - mr\ddot{\phi}(t) \sin \varphi - mr(t)\dot{\phi}(t)^2 \cos \varphi = N(t): \quad (12)$$


Մաթեմատիկական գործողություններ կատարելուց հետո, ստացվել է.

$$P_{\max} = 2 \frac{m\omega^2 (r_0 + V_0 t) - r(t) \cos \omega t}{2\pi \cos \omega t \cdot R_0 \ell} = \frac{m\omega^2 (r_0 + V_0 t) - r(t) \cos \omega t}{\pi R_0 \ell \cdot \cos \omega t}: \quad (13)$$

Գլանի պատի պահանջվող հաստությունը որոշելու համար, ստացվել է.

$$\min \delta_w \geq \frac{m\omega^2 (r_0 + V_0 t_1) - r(t_1)}{\pi \ell [\sigma]}, \quad (14)$$

Խառնիչում առաջացող դինամիկական ուժերի որոշման և ամրության հաշվարկային սխեման բերված է նկ. 5-ում:



Նկ. 5. Շնեկի հաշվարկային սխեման:

Կանաչ զանգվածի ու ծորտի խառնման ժամանակ խառնիչի գլանի պատերի և շնեկի թիակների վրա առաջանում են բավականին մեծ դինամիկական ուժեր:

Ներքին ուժերից առաջացող ծորղ և ոլորող մոմենտները որոշելու համար ստացվել են հետևյալ արտահայտությունները.

$$M_{\alpha_2} = \pi \xi n K \frac{r_0 \ell^2}{8\pi} \left[1 - \left(\frac{r_2}{r_0} \right)^2 \right] \left[\int_{\alpha_1}^{\alpha_2} \alpha \sin \alpha \cdot d\alpha + \int_{\alpha_1}^{\alpha_2} \alpha \cos \alpha \cdot d\alpha \right] = \xi K n \frac{r_0 \ell^2}{8} \left\{ \left[1 - \left(\frac{r_2}{r_0} \right)^2 \right] \times [(\sin \alpha_2 - \sin \alpha_1) + (\alpha_2 \cos \alpha_2 - \alpha_1 \cos \alpha_1)]^2 + [(\cos \alpha_2 - \cos \alpha_1) + (\alpha_2 \sin \alpha_2 - \alpha_1 \sin \alpha_1)]^2 \right\} \quad (15)$$

$$M_{\alpha_1} = \frac{\pi}{12} n_w n_p \xi h_p \left[1 - \left(\frac{r_e}{r_0} \right)^3 \right] K d_0^2 : \quad (16)$$

Լիսեռի ամրությունը ստուգվել է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_{\text{նդ}} = \frac{\sigma_{\text{max}}}{2} + \frac{1}{2} \sqrt{\sigma_{\text{max}}^2 + 4\tau_{\text{max}}^2} \leq [\sigma], \quad (17)$$



որտեղ $\sigma_{\text{նդ}}$ -ը ընդհանուր լարվածության մեծությունն է, σ_{max} և τ_{max} -ը՝ համապատասխանաբար նորմալ և շփման լարվածությունների առավելագույն արժեքները, $[\sigma]$ -ն՝ թույլատրելի նորմալ լարվածությունը:

Լուծվել են օրինակներ:

Ստացված բանաձևերը և գրաֆիկները հնարավորություն են տալիս նման խառնիչներ նախագծելիս հաշվարկել էլեկտրաշարժիչի պահանջվող հզորությունը, խառնիչի արտադրողականությունը և կատարել ամրության հաշվարկներ:

Երրորդ բաժինը նվիրված է սենածի ու սիլոսի պատրաստման տեխնոլոգիաների կատարելագործմանը և մեքենասարքավորումների ընտրությանն ու պարամետրերի հիմնավորմանը:

Ֆերմերային տնտեսություններում սենած ու սիլոս չպատրաստելու պատճառներից մեկը՝ երկաթբետոնե ամբարների բացակայությունն է: Դրանց կառուցումը կապված է շոշափելի կապիտալ ներդրումների հետ: Ուստի հետազոտությունների նպատակն է եղել հաշվարկել, նախագծել և արտադրության պայմաններում փորձարկել փոքր ծախսեր պահանջող ամբարներ ու խոնավ զանգվածի մեջ օրգանական թթուներ մտցնող սարքավորումներ:



Նկ. 6. Ծղոտի հակերով պատրաստված սիլոսամբար.


1. լցվող զանգված, 2. մակերեսը ծածկող թաղանթ, 3. թաղանթը մեկուսացնող ծղոտի հակեր, 4. հենարանային պատեր, 5. ամբարի երկայնական պատեր, 6. հատակն ու պատերը մեկուսացնող թաղանթ, 7. սիլոսացվող զանգված, 8. թողանքներին պատող ծղոտի հակեր:

Առաջարկվել է սիրոսացման նոր եղանակ, որը կապիտալ ծախսեր չի պահանջում և կիրառելի է գյուղատնտեսական բոլոր գոտիներում (ՀՀ արտոնագիր № 2329 A, 12.06.2009): Այն պատրաստվում է ծղոտահակերով (նկ. 6):

Կատարվել են ծղոտահակերով կառուցված ամբարի պատերի կայունության հաշվարկներ և որոշվել պատերի լավագույն չափերը:


Միլոսացվող կանաչ զանգվածի մեջ օրգանական բջուներ մտցնող նոր սարքավորումների կառուցվածքային սխեմաները բերված են նկ. 7, 8 և 9-ում:

Առաջին սարքը (նկ. 7) փոշենման պատրաստուկը սիրոսացվող զանգվածի մեջ է մտցնում հնձելու պահին, երկրորդը (նկ. 8)՝ փոշենման պատրաստուկը և երրորդը (նկ. 9)՝ հեղուկ պատրաստուկը ցրում են տոփանված զանգվածի վրա:




Նկ. 7. Օրգանական բջուները սիրոսացվող զանգվածի մեջ մտցնող սարքի կառուցվածքատեխնոլոգիական սխեման.

1. բունկեր, 2. շենկ, 3. անցք, 4. փական, 5. գապանակ, 6. ճոռ, 7. թմբուկ, 8. խողովակաշար, 9. հորվակ, 10. մետաղական ճուպան, 11. ձգան, 12. երկուսանի լծակ, 13. ձող, 14. թմբուկի լծակ, 15. թմբուկ:




Նկ. 8. Փոշենման պատրաստուկը տոփանված կանաչ զանգվածի վրա ցրող սարքավորման կառուցվածքային սխեման.

1. տրակտոր, 2. բունկեր, 3. ռեդուկտոր, 4. օդամղիչ, 5. աշխատանքային օրգան, 6. գլխադիր:



Նկ. 9. Միլոսացվող զանգվածը հեղուկ պատրաստուկով թրջող սարքավորման կառուցվածքային սխեման. 1. ծակոտկեն խողովակ, 2. տակառ, 3. մակարդակացուցիչ, 4. լծակ, 5. տրակտոր, 6. մետաղաճուպան, 7. փական, 8.տոփանված զանգված:

Պատերի կայունության հաշվարկային սխեման բերված է նկ. 10-ում:



Նկ. 10. Հաշվարկային համակարգ:

Խնդիրը լուծելու համար օգտագործվել են դեֆորմացիաների կապի Լամեի հավասարումները.

$$\nabla^2 U(x, z) + \frac{\lambda + \mu}{\mu} \cdot \frac{\partial e(x, z)}{\partial x} = 0, \quad \nabla^2 V(x, z) + \frac{\lambda + \mu}{\mu} \cdot \frac{\partial e(x, z)}{\partial z} = 0, \quad (18)$$

որտեղ $\nabla^2(x, z) = \frac{\partial^2(u)}{\partial x^2} + \frac{\partial^2(v)}{\partial z^2}$ -ը Լապլասի օպերատորն է, $U(x, z)$ և $V(x, z)$ -ը՝ տեղափոխությունները x և z առանցքներով, λ և μ -ն՝ Լամեի գործակիցը.

$$\lambda = \frac{\nu E}{(1 + \nu)(1 - 2\nu)}, \quad \mu = \frac{E}{2(1 + \nu)}, \quad (19)$$

ν -ն՝ Պուասոնի գործակիցը, E -ն՝ առաձգականության մոդուլը:

Կատարելով մի շարք մաթեմատիկական գործողություններ որոշվել են լարումների և տեղափոխությունների բաղադրիչ մեծությունները.

$$\sigma_x = -\frac{P}{\pi c} \sum_{n=1}^{\infty} \frac{\varphi(n)}{n} \left(\frac{1 + \nu}{1 - \nu} - \alpha_n z \right) e^{-\alpha_n z} \cos \alpha_n x - \frac{P}{a}, \quad (20)$$

$$\sigma_z = -\frac{P}{\pi c} \sum_{n=1}^{\infty} \frac{\varphi(n)}{n} \left(\frac{1}{1 + \nu} + \alpha_n z \right) e^{-\alpha_n z} \cos \alpha_n x - \frac{P}{a}, \quad (21)$$

$$\tau_{xz} = -\frac{P}{\pi c} \sum_{n=1}^{\infty} \frac{\varphi(n)}{n} (\alpha_n z) e^{-\alpha_n z} \sin \alpha_n x, \quad (22)$$

$$U(x, z) = \frac{2P}{\pi c E} \sum_{n=1}^{\infty} \frac{\varphi(n)}{n} \left(1 - \frac{1 + \nu}{1 - \nu} \alpha_n z \right) e^{-\alpha_n z} \sin \alpha_n x - 2\nu \frac{P}{a E} x, \quad (23)$$


$$V(x, z) = \frac{2P}{\pi c E} \sum_{n=1}^{\infty} \left\{ \frac{\varphi(n)}{n} \left[1 - \left(\frac{1 + \nu}{2} \right) \alpha_n z \right] e^{-\alpha_n z} \cos \alpha_n x + \frac{1}{2} \left(1 - \frac{1 + \nu}{2} \alpha_n h \right) e^{-\alpha_n h} \right\}: \quad (24)$$

Լարումների և տեղափոխությունների վերջնական մեծությունները որոշելու համար ավելացվել են զանգվածի սեփական քաշի ազդեցությունը.

$$\left. \begin{aligned} \sum \sigma_x &= \sigma_x + \sigma_x^0, \\ \sum \sigma_z &= \sigma_z + \sigma_z^0, \\ \sum \tau_{xz} &= \tau_{xz} + \tau_{xz}^0, \end{aligned} \right\} (25), \quad \left. \begin{aligned} \sum U(x, z) &= U(x, z) + U^0(x, z), \\ \sum V(x, z) &= V(x, z) + V^0(x, z): \end{aligned} \right\} (26)$$

Կառուցվել են լարումների բաղադրիչների (σ_z և σ_x) էպյուրները արտաքին բեռի և սեփական քաշի գումարային ազդեցությունից:

Ստուգվել է պատի կայունությունը զանգվածի ճնշման դեպքում (նկ. 11).



Նկ. 11. Կայունության ստուգման հաշվարկային համակարգ:

$$\frac{\sum M_{\text{պահ}}}{\sum M_{\text{շթթ}}} \geq K_{\text{շթ}}, \quad (27)$$

որտեղ $\sum M_{\text{պահ}}$ -ը պատը պահող ուժերի մոմենտների գումարն է, $\sum M_{\text{շթթ}}$ -ը՝ պատի շրջող մոմենտների գումարը, $K_{\text{շթթ}}$ -ը՝ պաշարի գործակիցը շրջման դեպքում, B-ն՝ պատի պահանջվող լայնությունը:

$$\sum M_{\text{պահ}} = Gb_c, \quad \sum M_{\text{շթթ}} = p_1 h_1 + p_2 h_2,$$

$$b_c = \frac{2}{3} B, \quad K_{\text{շթթ}} \geq \frac{G \cdot \left(\frac{2}{3} B\right)}{P_1 h_1 + P_2 h_2}, \quad K_{\text{շթթ}} = 1,5,$$

$$G = \gamma_1 \left(\frac{B + \delta}{2} \right) H, \quad P_1 = \xi \frac{\gamma h^2}{2}, \quad p_2 = \sigma_x \cdot h \cdot \frac{1}{3}, \quad h_1 = \frac{h}{3}, \quad h_2 = \frac{3h}{4},$$

Տեղադրելով համապատասխան մեծությունները, ստացվել է.

$$\frac{\gamma_1 (B + \delta) H \left(\frac{2}{3} B \right)}{2 \left[\xi \frac{\gamma h^2}{2} \cdot \left(\frac{h}{3} \right) + \sigma_x \cdot h \cdot \frac{3}{4} \left(\frac{3}{4} h \right) \right]} \leq 0,5: \quad (28)$$

Մեր դեպքի համար $\gamma = 0,345 \text{ տ/մ}^3$, $\gamma_1 = 0,40 \text{ տ/մ}^3$, $h = 2,8 \text{ մ}$, $H = 3,0 \text{ մ}$, $\sigma_x = 0,55 \text{ տոմ/մ}^2$, ξ -ն կողային ճնշման գործակիցը, $\xi = \frac{\nu}{1 - \nu}$, ν -ն՝ զանգվածի Պուասոնի

գործակիցը, $\nu = 0,14$, $\xi = \frac{0,14}{0,86} \approx 0,16$, $b = 0,2 \text{ մ}$: Տեղադրելով (28)-ում, ստացվել է, որ

պատերի կայունությունը պահպանելու համար անհրաժեշտ է, որ դրանց հաստությունը լինի 1,2 մ: Պատերի հաստությունը մեծ է ստացվել, որովհետև շրջման դեպքում պաշարի գործակիցը մեծ է վերցվել՝ $K_{\text{շթթ}} = 0,5$:

Գործնականում կարելի է մետաղական հենարաններ օգտագործելով պատի հաստությունը փոքրացնել և միաժամանակ կայունությունը պահպանել: Այդ հաշվարկները նույնպես կատարվել են:

Հաշվարկվել է սենժագվող ու սիլոսացվող կանաչ զանգվածի հավաքման մեքենաների և փոխադրամիջոցների լավագույն կազմը:

Օրգանական թթուների տարողության ծավալը որոշվել է .

$$V_p \geq G_{\text{եղ.գ}} = q_{\text{կ}} G_{\text{տ.գ. Լ}}: \quad (29)$$


Հաշվարկները և մեր գործնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տրակտորի վրա տեղադրվող բաքի լավագույն եզրաչափերն (տրամագիծը՝ $d_{\text{տ}} = 0,55 \text{ մ}$, բարձրությունը՝ $h_{\text{տ}} = 0,82 \text{ մ}$) ունի 200 լ տարողությամբ մետաղե տակառը:

Ծակոտկեն խողովակում հեղուկի շարժման ժամանակ աստիճանաբար հաջորդական անցքերից ելքը (ծախսը) պակասում է: Այսինքն, հեղուկը շարժվում է փոփոխական զանգվածով:

Օգտվելով հաստատուն մասսայով մարմնի շարժման հավասարումներից ստացվել են փոփոխական զանգվածով հեղուկի շարժման հավասարումները.

$$\left. \begin{aligned} d\left(\frac{\alpha_0 V^2}{2g}\right) + \frac{dP}{\gamma} + dz + i_f dx + \frac{\alpha_0(V-\theta)}{g} \cdot \frac{dQ}{Q} &= 0, \\ \frac{\alpha_0}{g\omega} d\left(\frac{Q^2}{\omega}\right) + \frac{dP}{\gamma} + dz + i_f dx - \frac{\alpha_0 \theta}{g\omega} dQ &= 0, \end{aligned} \right\} \quad (30)$$

որտեղ α_0 -ն արագության ճնշման մասնաշտկումն է, V -ն՝ հիմնական հոսքի արագությունը, γ -ն՝ հեղուկի ծավալային զանգվածը, ω -ն՝ անցքից դուրս եկող հոսքի կենդանի կտրվածքի մակերեսը, P -ն՝ հիդրոդինամիկական ճնշումը, Q -ն՝ հոսքի ծախսը, θ -ն՝ անջատված հեղուկի արագության մասնաշտկումը, i_f -ն՝ կորուստները շփման վրա, g -ն՝ ազատ անկման արագացումը:



Նկ. 12. Ծակոտկեն խողովակի հաշվարկային սխեման:

Ըստ նկ. 12-ում բերված հաշվարկային սխեմայի.

$$Q = Q_m + Q_0 - qx, \quad (31)$$

որտեղ Q_m -ն տրանզիտային ծախսն է, Q_0 -ն՝ ծախսն ըստ խողովակի երկարության բաշխման՝ $Q_0 = q\ell$, ℓ -ը՝ խողովակի երկարությունը:

Կատարելով որոշ մեկնաբանություններ և մաթեմատիկական գործողություններ, ստացվել են.

$$\frac{P_0 - P_x}{\gamma} = \frac{1}{K^2} \left[(Q_m + Q_0)^2 x - (Q_m + Q_0) \frac{Q_0}{\ell} x^2 + \frac{Q_0^2 x^3}{3\ell^2} \right] - \frac{\alpha_0 Q_0^2}{g\omega^2} \left[2 \left(\frac{Q_m}{Q_0} + 1 \right) - \frac{x}{\ell} \right] \frac{x}{\ell}, \quad (32)$$

$$h_w = \frac{1}{K^2} \left[(Q_m + Q_0)^2 x - (Q_m + Q_0) \frac{Q_0}{\ell} x^2 + \frac{Q_0^2 x^3}{3\ell^2} \right] - \frac{\alpha_0 Q_0^2}{2g\omega^2} \left[\left(2 \frac{Q_m}{Q_0} + 1 \right) - \frac{x}{\ell} \right] \frac{x}{\ell}: \quad (33)$$

Առաջարկված սարքավորումում տրանզիտային ծախսը բացակայում է ($Q_m=0$): Այդ դեպքում (32) և (33) հավասարումները պարզեցվում և ընդունում են հետևյալ տեսքը.

$$\frac{P_0 - P_x}{\gamma} = \frac{Q_0^2}{K^2} \left(x - \frac{x^2}{\ell} + \frac{x^3}{3\ell^2} \right) - \frac{\alpha_0 Q_0^2}{g\omega^2} \left(2 - \frac{x}{\ell} \right) \frac{x}{\ell}, \quad (34)$$


$$h_w = \frac{Q_0^2}{K^2} \left(x - \frac{x^2}{\ell} - \frac{x^3}{3\ell^2} \right) - \frac{\alpha_0 Q_0^2}{2g\omega^2} \left(2 - \frac{x}{\ell} \right) \frac{x}{\ell}: \quad (35)$$

Ստացված բանաձևերը հնարավորություն են տալիս ծակոտկեն խողովակի երկարությամբ անցքերի տրամագծերը փոփոխելով ապահովել բոլոր անցքերից հեղուկի հավասարաչափ ելք: Սակայն գտնում ենք, որ անցքերի տրամագծերը կարելի է թողնել հաստատուն, բայց հորիզոնական ծակոտկեն խողովակին բաքից հեղուկ մատուցող խողովակների թիվն ավելացնել և ծակոտկեն խողովակի

երկարությամբ տարբեր տեղամասերից մատուցել: Այս դեպքում անալիտիկ եղանակով լուծումն ավելի է բարդանում: Ուստի այդ խնդիրը լուծվել է գիտափորձերով:

Նկ. 7-ում ներկայացված է փոշենման օրգանական թթուները սենաժացվող ու սիլոսացվող զանգվածի մեջ մտցնող ավտոմատ սարքի աշխատանքի սկզբունքը՝ կանաչ զանգվածի մուտքը դեպի լողացող թմբուկ (15) ավելանալիս համապատասխան լծակային մեխանիզմով մեծանում է բեմգոյական թթվի ելքը բունկերից (1) ու կանաչ զանգվածի հետ խառնվելու չափը, և հակառակը: Հաշվարկվել և որոշվել են ավտոմատ գործող մեխանիզմների պարամետրերը:

Սահող փականի h_w տեղափոխությունը կախված է կողավոր թմբուկի H բարձրությունից և ձգանի DG երկարությունից: $h_w = f(H, \ell_{DC})$ ֆունկցիայի բացահայտման համար դիտարկվել է նկ. 13-ում ներկայացված սխեման:



Նկ. 13. Սահող փականի տեղափոխության հաշվարկային սխեման:

Կողավոր թմբուկի բարձրացման մեխանիզմն իրենից ներկայացնում է քառօղակ (ABCD), որի AB օղակի վրա B կետում հողակապով տեղակայված է կողավոր թմբուկը: Կողավոր թմբուկը H բարձրությամբ բարձրացնելու ժամանակ AB օղակը պտտվում է α_w անկյունով, որի մեծությունը հավասար է.

$$\alpha_w = \arcsin \frac{H}{\ell_{AB}}, \quad (36)$$

որտեղ ℓ_{AB} -ն AB օղակի երկարությունն է:

Այդ ժամանակաընթացքում CD օղակը և դրա հետ կոշտ միացված DG լծակը պտտվում են β_w անկյունով, այսինքն DG լծակը տեղափոխվում է DC դիրքից DG_1 դիրքը: Այդ դեպքում սահող փականի h_w երկարության տեղափոխությունը մեխանիզմի երկու դիտարկվող դիրքերում հավասար կլինի K և G կետերի միջև մետաղաճուպանի երկարությունների տարբերությանը՝


$$h_w = KG_1 - KG: \quad (37)$$

Որոշվել է β_0 անկյունը՝

$$\beta_0 = \arctg \frac{\sqrt{4\ell_{CD}^2 \ell_{BC}^2 - (\ell_{CD}^2 + \ell_{BC}^2 - \ell_{AB}^2 - \ell_{AD}^2 + 2\ell_{AB} \ell_{AD} \cos \alpha_0)^2}}{\ell_{CD}^2 - \ell_{BC}^2 + \ell_{AB}^2 + \ell_{AD}^2 - 2\ell_{AB} \ell_{AD} \cos \alpha_0} + \arctg \frac{\ell_{AB} \sin \alpha_0}{\ell_{AD} - \ell_{AB} \cos \alpha_0} : (38)$$

Որոշ մաթեմատիկական ու վերլուծական գործողություններ կատարելուց հետո, ստացվել է β անկյան կախվածությունը H -ից՝

$$\beta = \arctg \frac{\sqrt{4\ell_{CD}^2 \ell_{BC}^2 - \left[\ell_{CD}^2 + \ell_{BC}^2 - \ell_{AB}^2 - \ell_{AD}^2 + 2\ell_{AB} \ell_{AD} \cos \left(\alpha_0 - \arcsin \frac{H}{\ell_{AB}} \right) \right]^2}}{\ell_{CD}^2 - \ell_{BC}^2 + \ell_{AB}^2 + \ell_{AD}^2 - 2\ell_{AB} \ell_{AD} \cos \left(\alpha_0 - \arcsin \frac{H}{\ell_{AB}} \right)} + \arctg \frac{\ell_{AB} \sin \left(\alpha_0 - \arcsin \frac{H}{\ell_{AB}} \right)}{\ell_{AD} - \ell_{AB} \cos \left(\alpha_0 - \arcsin \frac{H}{\ell_{AB}} \right)} : (39)$$



Նկ. 14. β և β_{wl} անկյունների կախվածությունները լողացող փոխակրիչի կողավոր թմբուկի բարձրանալու մեծությունից (H):

Միտենայից (նկ. 13) նկատում ենք, որ β_{wl} անկյունը հավասար է.

$$\beta_{wl} = \beta - \beta_0 : (40)$$

Հաշվի առնելով օղակների չափսերը (39) և (40) արտահայտությունները հնարավորություն են տալիս որոշել β և β_{wl} անկյունների կախվածությունները կողավոր թմբուկի բարձրանալու H բարձրությունից (նկ. 14):

Ունենալով β_0 , β և β_{wl} անկյունների փոփոխության օրինաչափությունները, որոշվել է նաև (37) արտահայտության KG և KG_1 հատվածների փոփոխության բնույթը:

Որոշ մաթեմատիկական գործողություններից հետո որոշվել են KG և KG_1 հատվածները.

$$KG_1 = \sqrt{\ell_{DG}^2 \sin^2 \beta_0 + \left[\ell - \ell_{DG} \cos \beta_0 - \frac{h(\ell - \ell_{DG} \cos \beta)}{h + \ell_{DG} \sin \beta} \right]^2} + h \sqrt{1 + \frac{(\ell - \ell_{DG} \cos \beta)^2}{(h + \ell_{DG} \sin \beta)^2}} : (41)$$

$$KG = \sqrt{(\ell - \ell_{DG} \cos \beta_0)^2 + (\ell_{DG} \sin \beta_0 - h)^2} : (42)$$


Կատարելով համանման դաստղություններ, որոշվել են նաև՝

$$h_{wl} = \sqrt{\ell_{DG}^2 \sin^2 \beta + \left[\ell - \ell_{DG} \cos \beta_0 - \frac{h(\ell - \ell_{DG} \cos \beta)}{h + \ell_{DG} \sin \beta} \right]^2} + h \left[\sqrt{1 + \frac{(\ell - \ell_{DG} \cos \beta)^2}{(h + \ell_{DG} \sin \beta)^2}} - \sqrt{1 + \frac{(\ell - \ell_{DG} \cos \beta_0)^2}{(h + \ell_{DG} \sin \beta_0)^2}} \right] - \sqrt{\ell_{DG}^2 \sin^2 \beta_0 + \left[\ell - \ell_{DG} \cos \beta_0 - \frac{h(\ell - \ell_{DG} \cos \beta_0)}{h + \ell_{DG} \sin \beta_0} \right]^2} : (43)$$


$$h_{uz} = \sqrt{(\ell - \ell_{DG} \cos \beta)^2 + (\ell_{DG} \sin \beta - h)^2} - \sqrt{(\ell - \ell_{DG} \cos \beta_0)^2 + (\ell_{DG} \sin \beta_0 - h)^2} : \quad (44)$$

$$KG_1 = \sqrt{(\ell - \ell_{DG} \cos \beta)^2 + (\ell_{DG} \sin \beta - h)^2} : \quad (45)$$

Դրանց արդյունքում ստացվել են մի քանի տասնյակ գրաֆիկներ, որոնց օրինակները բերված են նկ. 15 և 16-ում:



Նկ. 15. Սահափականի տեղափոխման երկարությունը կախված կողային թմբուկի տեղաշարժի բարձրությունից ($h = -30$ մմ):



Նկ. 16. Սահափականի տեղափոխման երկարությունը կախված DG ձգաձողի երկարությունից:

Ունենալով սորուն նյութերի հիդրավլիկական արտահոսքի փոփոխության օրինաչափությունները և հաշվի առնելով այդ նյութերի ֆիզիկամեխանիկական հատկությունները, կարելի է լուծել մաև ցանկացած ձևի անցքից սորուն նյութի նորմալ արտահոսքի համապատասխան խնդիրներ:

Հայտնի է, որ ցանկացած տեսակի բունկերից սորուն նյութի հիդրավլիկական արտահոսքի ժամանակ արագությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_u = \sqrt{-\frac{gF_0}{F_0'}} , \quad (46)$$

որտեղ F_0 -ն՝ անցքի մակերեսն է, F_0' -ն՝ մակերեսի ածանցյալը:

Սեղանաձև բունկերի համար F_0 և F_0' մեծությունները որոշելու նպատակով օգտվել ենք նկ. 17-ում ներկայացված հաշվարկային սխեմայից:

x խորության վրա բունկերի կտրվածքի մակերեսը.

$$F_x = \frac{b_{ax} + b_{qx}}{2} h_{ux} , \quad (47)$$

որտեղ b_{ax} և b_{qx} -ը համապատասխանաբար սեղանի ներքևի և վերևի հիմքերն են, h_{ux} -ը՝ սեղանի բարձրությունը:

$$\text{Սխեմայից ունենք մաս՝} \quad h_{ux} = H_u - 2xtg\alpha , \quad (48)$$

որտեղ H_u -ն բունկերի կտրվածքում սեղանի բարձրությունն է, α -ն՝ ուղղաձիգի նկատմամբ բունկերի պատերի թեքության անկյունը:


$$b_{qx} = b_q + 2x \operatorname{tg}\beta_w \operatorname{tg}\alpha , \quad (49) \quad b_{ax} = b_a - 2x \operatorname{tg}\beta_w \operatorname{tg}\alpha : \quad (50)$$

Եթե անցքն ունի կազմովի ձև (նկ. 18), ապա (60)-ն ունի հետևյալ տեսքը՝


$$q = \gamma \left[\frac{a_u + a_v}{2} h_w + a_v (h_w - h_v) \right] \sqrt{\frac{1}{2} g h_w t g (\beta + \psi + x)}, \quad (61)$$

որտեղ h_u -ն սեղանի բարձրությունն է:

$q = f(h_w)$ ֆունկցիան գրաֆիկական տեսքով ներկայացված է նկ.19-ում, որից երևում է, որ h_w -ի մեծացումով q -ն մեծանում է պարաբոլային օրինաչափությամբ:




Նկ. 19. Նյութի ելքը կախված կազմովի ձևի անցքի երկարությունից:



Նկ. 20. Նյութի արտահոսքի սահմանային արագությունը կախված կողային թմբուկի տեղաշարժի բարձրությունից:

Նկ. 19-ում ներկայացված է կազմովի ձևի անցքից ստրուն նյութի արտահոսքի V_p սահմանային արագության և q ելքի գրաֆիկական կախվածությունները կողային թմբուկի տեղաշարժի H բարձրությունից:

Կորերի վերլուծությունը ցույց է տալիս, որ H -ի մեծացումով V_p -ի արժեքը մեծանում է նույն օրինաչափությամբ: Սակայն V_p - ի թվային արժեքները տվյալ դեպքում մեծապես կախված են h և l_{DG} -ի մեծություններից, որովհետև h_w -ն գտնվում է նշված մեծություններից կախման մեջ:



Նկ. 21. H_p և S մեծությունների միջև փոխադարձ կապի որոշման հաշվարկային սխեմա:

Կանաչ զանգվածի քանակի փոփոխության ժամանակ օրգանական թթվի չափավորված մատուցում ապահովելու նպատակով որոշվել են բունկերի դիրքը՝ H_p և անցքի կենտրոնից S հեռավորությունը մինչև սնուցող գրտնակների առանցքը (նկ. 21):

Նշված պարամետրերի փոխադարձ կապը որոշվել է հետևյալ պայմանից՝ բունկերից կանաչ զանգվածի վրա օրգանական թթվի ընկնելու է ժամանակը հավասար պետք է լինի սնուցող գրտնակներից կանաչ զանգվածը մինչև պատրաստուկի ընկնելու տեղը տեղափոխվելու t_s ժամանակին:

Ընկնող մասնիկի շարժման դիֆերենցիալ հավասարումը կլինի.

$$m \frac{dV}{dt} = mg - R, \quad (62)$$

որտեղ $R = mK_w V^2$ օղի դիմադրության ուժն է, K_w -ն առազաստայնության գործակիցը:

Տեղադրումներ, ձևափոխություններ և լուծումներ կատարելուց հետո՝

$$V = \frac{\sqrt{\frac{g}{K_w}} \left[\left(\sqrt{\frac{g}{K_w}} + V_0 \right) e^{2\sqrt{gK_w} t} - \left(\sqrt{\frac{g}{K_w}} - V_0 \right) \right]}{\left(\sqrt{\frac{g}{K_w}} + V_0 \right) e^{2\sqrt{gK_w} t} + \left(\sqrt{\frac{g}{K_w}} - V_0 \right)} : \quad (63)$$

Ինտեգրելուց հետո՝

$$h = \frac{1}{K_w} \ln \left\{ \frac{1}{2} \sqrt{\frac{K_w}{g}} \left[\left(\sqrt{\frac{g}{K_w}} + V_0 \right) e^{\sqrt{gK_w} t} + \left(\sqrt{\frac{g}{K_w}} - V_0 \right) e^{-\sqrt{gK_w} t} \right] \right\} : \quad (64)$$

Մնացող գրտնակներից դուրս եկած կանաչ զանգվածի շերտը շարժվում է հետևյալ արագությամբ՝

$$V_q = \eta V_q, \quad (65) \quad \text{կամ} \quad V_q = \eta \omega r = \frac{\eta \pi n r}{30}, \quad (66)$$

որտեղ η -ն գրտնակի տեղապտույտի գործակիցն է, V_q -ն՝ գրտնակների շրջագծային արագությունը, ω -ն՝ գրտնակի անկյունային արագությունը, r -ը՝ գրտնակի շառավիղը, n -ը՝ գրտնակի պտտման հաճախությունը:

Ժամանակը, որի ընթացքում զանգվածն անցնում է S ճանապարհ՝

$$t_s = \frac{S}{V_q} = \frac{30}{\eta \pi n r} : \quad (67)$$

Տեղադրելով (67)-ը (64)-ում, կորոշվի՝

$$H_1 = \frac{1}{K_w} \ln \left\{ \frac{1}{2} \sqrt{\frac{K_w}{g}} \left[\left(\sqrt{\frac{g}{K_w}} + V_0 \right) e^{\sqrt{gK_w} \frac{30}{\eta \pi n r}} + \left(\sqrt{\frac{g}{K_w}} - V_0 \right) e^{-\sqrt{gK_w} \frac{30}{\eta \pi n r}} \right] \right\} : \quad (68)$$

H_p բարձրությունը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$H_p = H_1 + (H_2 + r), \quad (69)$$

որտեղ H_2 -ն կանաչ զանգվածի շարժվող շերտի հաստությունն է: Այդ դեպքում՝

$$H_p = H_2 + r + \frac{1}{K_w} \ln \left\{ \frac{1}{2} \sqrt{\frac{K_w}{g}} \left[\left(\sqrt{\frac{g}{K_w}} + V_0 \right) e^{\sqrt{gK_w} \frac{30S}{\eta \pi n r}} + \left(\sqrt{\frac{g}{K_w}} - V_0 \right) e^{-\sqrt{gK_w} \frac{30S}{\eta \pi n r}} \right] \right\} : \quad (70)$$

H_2 մեծությունը կարելի է որոշել հետևյալ արտահայտությունից.

$$H_2 = \frac{30g}{\gamma \eta \pi n L} : \quad (71)$$

Առաջարկվել են բանաձևեր, հաշվարկվել և որոշվել են. տոփանված զանգվածի վրա փոշենման պատրաստուկը ցրող սարքավորման բունկերի լավագույն տարողությունը (V), տվյալ ցիկլում խողովակներից պատրաստուկի պահանջվող ելքը (G_2), տվյալ ցիկլում տրվող պատրաստուկի անհրաժեշտ քանակը

(M), ցրման ցիկլի տևողությունը (t_g), տրակտորային ագրեգատի աշխատանքային ցիկլի տևողությունը (t_m), ագրեգատի ընդգրկման լայնությունը (B):

Տեսական հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա Բալահովիտի ուսումնասիրածնական տնտեսությունում ծրագրահանրակերպ կառուցվել է սիլոսամբար:

Գիտափորձերի ընթացքում հետևել ենք տրակտորով տոփանման ժամանակ ծրագրահանրակերպ պատրաստված ամբարի պատերի ցնցումներին և պարբերաբար չափել դրանց հնարավոր դեֆորմացիաներն ու տեղաշարժերը և համոզվել, որ ծրագրի հակերպ երկշարք ու խաչաձև շարված պատերի կայունությունը գտնվում է նորմալ պայմաններում:

Լաբորատոր պայմաններում կատարվել են հեղուկ օրգանական թթուներ ցրող սարքավորման կառուցվածքատեխնոլոգիական պարամետրերի և շահագործական ռեժիմների օպտիմալացումը:

Գիտափորձերը հաջող անցկացնելու և իրատեսական արդյունքներ ստանալու համար նախագծվել ու պատրաստվել է հատուկ ստենդ (նկ. 22):



ա)



բ)

Նկ. 22. Օրգանական թթուների ցրման սարքի լաբորատոր գիտափորձերի դրվագները.

ա) բաբում լուծույթի ծավալը ցույց տվող սանդղակի չափաբերումը, բ) ծակոտկեն խողովակն ու իր տակ դրված շշերը:

Գիտափորձերի ընթացքում չափաբերվել են տակառային բաբում լուծույթի քանակը և ծախսը ցույց տվող սանդղակը, որոշվել լուծույթի պահանջվող ելքն ու ցրման նորմերն ապահովող կառուցվածքային և շահագործական պարամետրերը:


Ստենդը բաղկացած է 200 լ տարողությամբ գլանային տակառից, տակառի ճակատային մասում տեղակայված սանդղակից, բաց թողնվող լուծույթի քանակը հսկող ու կարգավորող էլեկտրական ավտոմատ սարքից, ծակոտկեն խողովակաշարից:

Տոփանված շերտի վրայով տրակտորն առաջ և հետ շարժվելով ցրման ընթացքում բաբում լուծույթի մակարդակն իջնում է: Իջնում է նաև մագնիսական լողանը: Այն մտնելով կոնտակտների միջև, մագնիսական դաշտը միացնում է էլեկտրական շղթան և էլեկտրամագնիսական փականը փակվում է: Ուստի, դադարում է խողովակաշարից լուծույթի ելքը և տվյալ ցիկլում ցրման աշխատանքն ավարտվում է:

Մշակվել են գիտափորձերի մեթոդներ և որոշվել հորիզոնական ծակոտկեն խողովակին լուծույթ մատուցող խողովակների քանակը և միացման տեղամասերը:

Բացահայտվել են հորիզոնական ծակոտկեն խողովակի անցքերից (10) ըստ լայնության ձախ և աջ տեղամասերում լուծույթի ելքի օրինաչափությունները երեք դեպքերի համար՝ 1) եռաճյուղ խողովակաշարից (նկ. 23) միայն մեջտեղինն է (7)


լուծույթ մատուցում ծակոտկեն խողովակին (9), 2) կողային խողովակներն են մատուցում և 3) երեք խողովակները միաժամանակ են մատուցում:



Նկ. 23. Հորիզոնական ծակոտկեն խողովակի հետ եռաճյուղ խողովակների միացման կառուցվածքային սխեման:

1, 5. ձախ ու աջ ճյուղավորված խողովակներ, 2, 6, 7. ճյուղավորված խողովակների փականներ, 3. կենտրոնական խողովակ, 4. էլեկտրամագնիսական փական, 8, 11. հորիզոնական ծակոտկեն խողովակի փականներ, 9. ծակոտկեն խողովակ, 10. անցքեր:

Գիտափորձերի տվյալների մշակման արդյունքները բերված են նկ. 24-ում:




Նկ. 24. Հորիզոնական ծակոտկեն խողովակից լուծույթի ելքի օրինակաչափությունները կախված ճյուղավորված խողովակների քանակից ու տեղամասից:

Երրորդ եղանակի գիտափորձերի արդյունքները բավարարում են ազդո-

անասնաբուժական պահանջներին:

Լաբորատոր պայմաններում (նկ. 22) փորձարկվել են 2, 3 և 4 մմ տրամագծի անցքերով երեք ծակոտկեն խողովակներ: Տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ լուծույթի միջին ելքը 2 մմ տրամագծով անցքերով ծակոտկեն խողովակից մեկ անցքի հաշվով կազմում է 0,012 լ/վ, 3 մմ -ի դեպքում՝ 0,023 լ/վ, 4 մմ-ի դեպքում՝ 0,043 լ/վ:

Ամփոփված տվյալներով կառուցվել է նկ. 25-ում բերված գրաֆիկը:





Նկ. 25. Տոփանված զանգվածի վրա օրգանական թթուների ցրման ցիկլի տևողությունը ($t_{t,q}$) կախված թթվի բաժնեչափից (q_w) ու քանակից ($Q_{t,q}$) տարբեր խոնավությունների (W) դեպքում և այլն:

Նկ. 25-ում մանրագծիկներով պատված մակերեսը ցույց է տալիս, թե տրակտորային ցրիչ ագրեգատը 3 կմ/ժ արագությամբ աշխատելիս ինչ տրամագծով անցքերից կարող է պահանջվող ժամանակահատվածում ապահովել $Q_{ել}$ քանակությամբ լուծույթի ցրումը տոփանված զանգվածի վրա: Որպեսզի ապահովել մանրագծիկներից վերև ժամանակահատվածներում համապատասխան $Q_{ել}$ քանակություններով լուծույթների ցրման նորմալ ռեժիմը, անհրաժեշտ է փոփոխել տրակտորային ագրեգատի արագությունը:

Գիտափորձերով որոշվել են խրամատում տոփանված զանգվածի վրա լցված հեղուկ օրգանական թթուները սիլոսացվող զանգվածի շերտերի մեջ ներծծվելու հնարավորությունը և արագությունը կախված թթվի ծավալից (V_p), տոփանված շերտերի ծավալային զանգվածից (γ_2) ու հաստությունից (H_2):

Օպտիմալացվել են փոշենման օրգանական թթուները կանաչ զանգվածի մեջ մտցնող արքավորման կառուցվածքատեխնոլոգիական պարամետրերը և շահագործական ռեժիմները: Գիտափորձերով որոշվել են. կողավոր թմբուկի վերեքի բարձրության և երկուսանի լծակի վրա ձգանի երկարության ազդեցությունը բունկերում անցքի երկարության վրա, պարզ ձևի անցքերի (ուղղանկյուն, եռանկյունաձև և սեղանաձև) և դրանց չափերի, կազմովի ձևի անցքի (սեղանաձև + ուղղանկյուն) և դրանց չափերի, կոնսերվանտով լցված բունկերում շմեկի պտտման հաճախության և երկուսանի լծակի վրա ձգանի երկարության ազդեցությունը կոնսերվանտի

ծախսի օրինաչափության վրա, կախված կողավոր թմբուկի վերելքի բարձրությունից:



Նկ. 26. Լաբորատոր տեղակայանքի սխեման:

Նկ. 27. Լաբորատոր տեղակայանքի ընդհանուր տեսքը:

Տեղակայանքը (նկ. 26) բաղկացած է բունկերից (1): Բունկերի ներքևի մասում տեղակայված են շնեկային սուղիչը (4) և խառնիչը (5): Բունկերի հատակում արված է ուղղանկյուն անցք (3), որի տակ ամրացվում են տարբեր եզրածևի անցքերով (7) փոխարինվող թիթեղներ (6): Անցքի (7) երկարությունը փոփոխվում է սահափականը (8) տեղափոխելով:

Շնեկի լիսեռի պտտող մոմենտը որոշելու համար լիսեռի վրա ստանձվել են տեմզոտվիչներ: Տվիչներից ազդանշանները փոխանցվել են TPAK տոկահանիչով և սևեռվել են օսցիլոգրաֆով:

Խնդիր է դրվել գտնել անցքի այնպիսի ձև, որը կարողանա ապահովել բունկերից կոնսերվանտի ելքի փոփոխության դեպքում հավասարաչափ հոսք:

Գիտափորձերով որոշվել են կողավոր թմբուկի վերելքի բարձրությունից կախված պատրաստուկի ծախսը ուղղանկյունաձև, եռանկյունաձև և սեղանաձև և կազմովի ձևի անցքերի դեպքում և կառուցվել են գրաֆիկներ, որոնցից նկ. 28-ում բերված է միայն կազմովի ձևի անցքի համար:


Հետազոտությունները ցույց են տվել, որ պարզ ձևի անցքերը (ուղղանկյունաձև, եռանկյունաձև, սեղանաձև) չեն բավարարում կոնսերվանտի ճշգրիտ չափավորումը:

Նկ. 28-ում ներկայացված բոլոր կորերը նշված ֆունկցիայի համեմատությամբ որոշ չափով ուղղվում է և մոտենում փոփոխության ուղիղ համեմատական բնույթի:

Ալցինայտ է, որ շնեկի պտտման n հաճախությունն ազդեցություն է թողնում անցքից սարույն նյութի հոսքի (ծախսի) վրա: Ուստի կատարվել են մի շարք գիտափորձեր շնեկի պտտման տարբեր հաճախությունների դեպքում, մասնավորապես n -ի 11,5, 19,4, 30,2 և 42,8 րոպ^{-1} արժեքների համար:

Հետազոտությունները կատարվել են կազմովի ձևի անցքի համար, որն ունի հետևյալ պարամետրերը. $a_1=15$ մմ, $a_2=25$ մմ, $h_1=10, 15, 20$ և 30 մմ: Ստացված արդյունքները վերածվել են գրաֆիկների:

Գիտափորձերի արդյունքները ցույց են տվել, որ շնեկի պտտման n հաճախության մեծացմանը զուգընթաց $q = f(H)$ ֆունկցիաները մեծանում են: Հատկապես այդպիսի օրինաչափություններ նկատվում են H -ի մեծ արժեքների ժամանակ, մասնավորապես $H > 60$ մմ միջակայքում, և h_1 - ի 10 և 15 մմ արժեքների դեպքում,



Նկ. 28. Պատրաստուկի ծախսը կախված կողավոր թմբուկի վերելքի բարձրությունից (անցքը կազմովի ձևի, $a_0 = 20$ մմ):

Օգտվելով գիտափորձերի տվյալներից կատարվել են համապատասխան հաշվարկներ և կառուցվել պատրաստուկի ծախսի միջին քառակուսային շեղման (σ_q) փոփոխության գրաֆիկները կախված կողավոր թմբուկի վերելքի H բարձրությունից ուղղանկյունաձև, սեղանաձև և կազմովի ձևի անցքերի համար:

Կազմովի ձևի անցքի համար $V_q = f(H)$ ֆունկցիայի վերլուծությունը ցույց է տալիս, որ V_q -ի առավելագույն արժեքներն ունեն $H=85-100$ մմ միջակայքում: Ըստ որում հետազոտվող կազմովի անցքերի համար V_q -ի առավելագույն արժեքը չի բարձրանում 2,9 %-ից:

Տեսական ու գիտափորձական հետազոտությունների արդյունքների հիման վրա ճշտված պարամետրերով ծրոտահակերով պատրաստված սիլոսամբարի, սիլոսացվող կերերի հավաքման ու փոխադրման համալիրների և օրգանական թթուներ ցրող սարքավորումների արտադրական փորձարկումները կատարվել են 2011-2012 թթ. Կոտայքի մարզի Բալահովտի և Արմավիրի մարզի Արագածի տնտեսություններում:

Արտադրական փորձարկումների նպատակն է եղել ստուգել ծրոտահակերով պատրաստված սիլոսամբարի օգտագործման հնարավորությունները, հավաքող ու փոխադրող մեքենաների շահագործական ցուցանիշները, սիլոսացվող կանաչ զանգվածի մեջ օրգանական թթուներ մտցնող սարքավորումների աշխատունակությունը և տնտեսական արդյունավետությունը:

Արտադրության պայմաններում վերջնականապես ճշտելով ծրոտի հակերով պատրաստված սիլոսամբարի բոլոր անհրաժեշտ պարամետրերը, նախագծվել ու Արմավիրի մարզի Արագած համայնքում՝ ՎՏՎ Ագրո ՍՊԸ տնտեսությունում կառուցվել ու ներդրվել է ճշտված պարամետրերով սիլոսամբար (նկ. 29): Այս սիլոսամբարի լայնությունը 8 մ է, պատի բարձրությունը՝ 3 մ, ծրոտի հակերը դարավել էին ներքևում՝ եռաշարք, վերևում երկշարք՝ խաչաձև:

Արտադրական փորձարկումները ցույց տվեցին, որ առաջարկված եղանակով սիլոսի պատրաստման ամբարն աշխատունակ է, կապիտալ ծախսեր չեն պահանջվում, շահագործական ծախսերը նվազագույն չափի են:

Հաշվարկվել են մեքենաների շահագործական ցուցանիշները: Որոշվել են հավաքող, մանրացնող և բարձող կոմբայնների անհրաժեշտ թիվը, կոմբայնի

ունեն փոփոխության ուղիղ համեմատական բնույթ H-ի բոլոր ուսումնասիրվող սահմաններում: Այսինքն, $n=19,4$ րոպ⁻¹-ի դեպքում H-ի այդ սահմանը կազմում է 0-85 մմ, $n = 30,2$ րոպ⁻¹-ի դեպքում՝ 0-70 մմ, իսկ $n = 42,8$ րոպ⁻¹-ի դեպքում՝ 0-55 մմ:

Ելնելով այն փաստից, որ КПМ-2,4 (КУФ-1,8) կերհավաք կոմբայնում կողավոր թմբուկի վերելքի H բարձրությունը 85 մմ-ից չի անցնում, կարելի է փաստել, որ շնեկի պտտման $n \leq 20$ րոպ⁻¹ հաճախությունների դեպքում այդ կոմբայններում կարելի է ապահովել $q = f(H)$ ֆունկցիայի ուղիղ համեմատականությունը H-ի փոփոխության բոլոր միջակայքերում:

օրական և ժամային արտադրողականությունները, հերթափոխի ժամանակի օգտագործման գործակիցը և փոխադրամիջոցների ընդհանուր թիվը:



ա)



բ)



գ)



դ)



ե)

Նկ.29. Սիլոսի պատրաստումը Արագածի համայնքում ծղոտի հակերով կառուցված ամբարում. ա) կառուցված ամբարը, բ) բաղանջի փոստը ամբարի ներսում, գ) դաշտից փոխադրված եգիպտացորենի կանաչ զանգվածի լցումը ամբարի մեջ, դ) զանգվածի հարթեցումը, ե) զանգվածի տոփանումը:

Հեղուկ օրգանական թթուներ ցրող տրակտորային սարքավորման արտադրական փորձարկումները կատարվել են Բալահովիտում (նկ. 30):



Նկ. 30. Տոփանված կանաչ զանգվածի վրա օրգանական թթվի ցրման գործընթացը:

Փորձարկումների կատարման պայմանները, կանաչ զանգվածը եղել է լեռնային մարգագետնային թիթեռնածաղկավոր և դաշտավտուկազգի խոտաբույսերի խառնուրդներ, մանրվածքի երկարությունը՝ մինչև 8 սմ, զանգվածի խոնավությունը՝ 68-86 %, ծավալային զանգվածը՝ 450-540 կգ/մ³, շրջակա օդի ջերմաստիճանը եղել է 24-28⁰C:

Ստացվել են. արտադրողականությունը՝ 0,012-0,043լ/վ, ցրման ցիկլի տևողությունը 2-4 սմ անցքերի դեպքում՝ 2,13-5,27 րոպե: Արդյունքները բավարարում են պահանջներին:

Փոշենման օրգանական թթուները կանաչ զանգվածի մեջ մտցնող սարքավորման արտադրական փորձարկումները կատարվել են Արարատի մարզի Արշալույս համայնքի դաշտերում սիլոսի համար եգիպտացորենի հավաքման գործընթացում (նկ. 31):

Սարքավորման փորձարկման գործընթացում սիլոսացվել է 250 տ եգիպտացորենի կանաչ զանգված. բենզոական թթվի ծախսը կազմել է 2,036 կգ/տ:



Նկ. 31. KPM-2,4 կոմբայնի վրա սարքի ընդհանուր տեսքը:

Մենաժառանգվող և սիլոսացվող կանաչ զանգվածի մեջ փոշենման ու հեղուկ օրգանական թթուներ մտցնող սարքավորումների արտադրական փորձարկումները ցույց են տվել, որ մշակված կոմսերվացնող սարքավորումներն աշխատունակ են և հուսալի, բավարարում են ագրոտնասնաբուծական պահանջներին:

Չորրորդ բաժնում տրված են ծղոտի մշակման ու ամբարման տեխնոլոգիաների կատարելագործումը և մեքենասար-

քավորումների կառուցվածքային ու տեխնոլոգիաշահագործական պարամետրերի հիմնավորումը:

Ծղոտն ունի համեմատաբար ցածր սննդարարություն (0,2-0,4 կերամիավոր, 7-24 գ մարսելի պրոտեին) և թաղանթանյութի բարձր պարունակության պատճառով կենդանիների մարսողության աղետամոքսային ուղիներում դժվար է վերամշակվում: Քիմիական եղանակով մշակելուց հետո ծղոտի սննդարար արժեքը բարձրանում է մինչև 2 անգամ և լավանում է ուտելիությունը:

Առաջարկվում է ծղոտի քիմիական մշակման նոր տեխնոլոգիական գիծ, որը գոյություն ունեցողների համեմատությամբ ունի պարզ կառուցվածք և ներդրման համար պահանջվող ծախսերը մեծ չեն:

Որոշվել են ծղոտի հակերով պատրաստված ծղոտամբարի կառուցվածքային պարամետրերը, վերլուծվել են ծղոտամանրիչ մեքենայի շահագործական ցուցանիշները, որոշվել են մանրիչ մեքենայի արտադրողականությունը, էներգատարությունը և ծղոտի ֆիզիկամեխանիկական ցուցանիշները, հիմնավորվել են լուծույթի մղման ու մանրացված ծղոտի համաչափ թրջման հիդրավլիկական համակարգի պարամետրերը, օպտիմալացվել են տեխնոլոգիական գծի կառուցվածքային, տեխնոլոգիական և շահագործական պարամետրերը:

Ծղոտը մշակում են տարբեր եղանակներով: Ներկայումս ամենաարդյունավետը համարվում է քիմիականը:

Ծղոտը կաուստիկ սոդայով մշակելու և փակ շենքերում պահելու լավագույն եղանակ է առաջարկվել դանիական «Թորուպ» ֆիրման:


Փակ շենքերում քիմիացումն ունի ակնհայտ առավելություն՝ ծղոտը մանրացված վիճակում քիմիական լուծույթով հավասարաչափ է թրջվում և որակը բարձրանում է: Սակայն ծղոտի քիմիացման այս եղանակը ևս ունի թերություններ՝ 1) ծղոտի մանրացման ու քիմիական լուծույթով թրջման մեքենայի կառուցվածքը բարդ է և 2) քիմիացված ծղոտի ամբարման համար պահանջվում է ունենալ բավականին մեծ ծախսեր պահանջող մետաղական կարկասով շինություն:

«Թորուպ» ֆիրմայի տեխնոլոգիական գծի արտադրողականությունը 4 տ/ժ է, շարժումն ստանում է տրակտորի հզորության անջատման լիսեռից: Պահանջվող հզորությունը 70 ձ. ուժ է, զանգվածը՝ 2500 կգ:

Մեզ հաջողվել է «Թորուպ 805»-ի բարդությունները վերացնել և առաջարկել փակ ամբարներում ծղոտի քիմիացման պարզագույն մեքենա և շինություն (ՀՀ արտոնագիր № 2170 A2, 12.03.2009):

Առաջարկվել է «Թորուպ 805» ֆիրմայի բարդ մեքենան փոխարինել ИГК-30Б մանրիչով, վրան հարմարացնել ցնցուղ, իսկ կողքը տեղադրել քիմիական լուծույթի

բաք ու պոմպ, իսկ կապիտալ շինությունը փոխարինել ծղոտի հակերով պատրաստված ժամանակավոր շինությունով (նկ. 32):




Նկ. 32. Ծղոտի հակերով պատրաստված շինությունում ծղոտի քիմիական մշակման առաջարկվող գծի կառուցվածքատեխնոլոգիական սխեման:

1-ծղոտի հակերով պատրաստված շինություն, 2-քիմիացված ծղոտի մանրվածք, 3- լուծույթի բաք, 4-պոմպ, 5-ծղոտամանրիչ ՄԴԿ-30Ե, 6-ժապավենային փոխակրիչ, 7- մանրացվող ծղոտի հակեր, 8-լուծույթի հետադարձ խողովակ, 9, 10-փական, 11-մանուժետր, 12- խողովակ, 13, 14-մանրացված ծղոտի խողովակներ, 15-ցնցուղ:

Հաշվարկվել են հակերով պատրաստված ամբարի պատերի կայունությունը, խողովակաշարով շարժվող ծղոտի հոսքայնությունն ու մանրիչի արտադրողականությունը տարբեր ռեժիմներով աշխատելիս, քիմիական լուծույթը պահանջվող քանակությամբ դեպի ցնցուղ մղման հիդրոհամակարգը և այլն:

Նկ. 33-ում ներկայացված է ծղոտամբարի կայունության հաշվարկային համակարգը:



Նկ. 33. Ծղոտամբարի պատերի կայունության հաշվարկային համակարգ:

Օգտվելով տարրի հավասարակշռության պայմանից, ստացվել են.

$$\sigma_z A(z) - (\sigma_z + d\sigma_z)[A(z) + dA(z)] + dG(z) = 0, \quad (72)$$

$$\tau_{xz} A(z) - (\tau_{xz} + d\tau_{xz})[A(z) + dA(z)] - \sigma_x^0 dz \cdot 1 = 0, \quad (73)$$

որտեղ σ_z , σ_x^0 -ն նորմալ լարումներն են, τ_{xz} -ը՝ շոշափող լարումը, $A(z)$ -ը՝ տարրի հորիզոնական կտրվածքի մակերեսը, $dG(z)$ -ը՝ տարրի կշիռը:

(72) և (73) հավասարումները ձևափոխելով, ստացվել են.

$$d\sigma_z A(z) + \sigma_z dA = dG(z), \quad (74) \quad -d\tau_{xz} A(z) + \tau_{xz} dA(z) = \sigma_x^0 dz \cdot 1, \quad (75)$$

$$A(z) = (b + Kz)l, \quad dA(z) = Kdz \cdot l, \quad K = \frac{B-b}{H}, \quad dG(z) = \gamma_h(b + Kz)dz \cdot l, \quad \sigma_x^0 = \gamma_h z, \quad (76)$$

որտեղ γ -ն զանգվածի ծավալային կշիռն է:

Դիֆերենցիալ հավասարումներն (74), (75) ինտեգրելուց, հաստատումները որոշելուց և ձևափոխություններ անելուց հետո, ստացվել են.

$$\sigma_z = \frac{\gamma_h z}{b + Kz} \left(b + K \frac{z}{2} \right): \quad (77) \quad \tau_{xz} = \frac{\gamma_h z^2}{2(b + Kz)}: \quad (78)$$

Օգտվելով տարրի հավասարակշռության հավասարումներից, որոշ գործողություններ կատարելուց հետո, որոշվել է նաև σ_x -ի մեծությունը.

$$\sigma_x = \frac{\gamma_h z}{2} \cdot \frac{2b + Kz}{(b + Kz)^2} x: \quad (79)$$

Հենապատերի հորիզոնական և ուղղահիգ տեղափոխությունները (U_x և V_z) որոշելու համար օգտագործվել են հարաբերական դեֆորմացիաների և լարումների կախվածությունները.

$$\varepsilon_x = \frac{1+\nu}{E} [-(1-\nu)\sigma_x + \nu\sigma_z] = -\frac{1-\nu^2}{E} \left(\sigma_x - \frac{\nu}{1-\nu} \sigma_z \right), \quad (80)$$

$$\varepsilon_z = \frac{1+\nu}{E} [(1-\nu)\sigma_z + \nu\sigma_x] = \frac{1-\nu^2}{E} \left(\sigma_z + \frac{\nu}{1-\nu} \sigma_x \right), \quad (81) \quad \gamma_{xz} = \frac{\tau_{xz}}{G} = \frac{2(1+\nu)}{E} \tau_{xz}: \quad (82)$$

Տեղադրելով (77), (79) և (78)-ից σ_z , σ_x և τ_{xz} մեծությունները և հաշվի առնելով, որ $\varepsilon_x = \frac{\partial U_x}{\partial x}$, $\varepsilon_z = \frac{\partial V_z}{\partial z}$ և $\gamma_{xz} = \left(\frac{\partial U_x}{\partial z} + \frac{\partial V_z}{\partial x} \right)$, որոշվել են. U_x , U_z ու γ_{xz} տեղափոխությունները և սահքի անկյունը.


$$U_x = \frac{1-\nu^2}{E} \left(\frac{\gamma_h z}{2} \right) \left[\frac{2b + Kz}{(b + Kz)^2} \cdot \frac{x^2}{2} + \frac{\nu}{1-\nu} \left(\frac{2b + Kz}{b + Kz} \right) x \right], \quad (83)$$

$$U_z = \frac{1-\nu^2}{E} \frac{\gamma_h}{2} \left[\frac{2b}{K} \left[z - \frac{b}{K} \ln(b + Kz) \right] + \frac{1}{K^2} \times \left[\frac{1}{2}(b + Kz)^2 - 2b(b + Kz) + b^2 \ln(b + Kz) \right] \right. \\ \left. + \frac{\nu}{1-\nu} x \left[\frac{2b}{K^2} \left(\frac{b}{b + Kz} - \ln(b + Kz) \right) + \frac{1}{K^2} [(b + Kz) - 2bK \ln(b + Kz)] - \frac{b^2}{b + Kz} \right] \right], \quad (84)$$

$$\gamma_{xz} = \left(\frac{\partial U_x}{\partial z} + \frac{\partial V_z}{\partial x} \right) = \frac{2(1+\nu)}{E} \tau_{xz} = \frac{1+\nu}{E} \gamma_h \frac{z^2}{b + Kz}: \quad (85)$$

Առավելագույն տեղափոխությունները որոշելու համար, օգտագործվել են (83), (84) և (85)-ի max մեծությունները:

Ընդունելով $E = 0,02$ կՆ/սմ², $\gamma_h = 0,2q10^{-5}$ կՆ/սմ³, $B = 100$ սմ, $U = 300$ սմ, $\nu = 0,25$, $K = 0,2$, $\gamma_{\text{ն}} = 0,07q10^{-5}$ կՆ/սմ³, $\max U_x = 0,032$ մ, $\max U_z = 0,128$ մ, $\max \gamma_{zx} = 0,16$, պատի 1 մ լայնության համար մաքսիմում լարումները ստացվել են. $\max \sigma_z = 0,256q10^{-2}$ ՄՊա, $\max \sigma_x = -0,10q10^{-2}$ ՄՊա, $\max \tau_{zx} = 0,54q10^{-2}$ ՄՊա:



Նկ. 34. Հենապատի կայունության հաշվարկային համակարգ:

Կատարվել է նաև հենապատի կայունության հաշվարկը (նկ. 34):

Ունենալով $H = 3$ մ, $B = 1,0$ մ, $b = 0,4$ մ, $\gamma_h = 0,12$ տուժ/մ³, $\gamma_{\delta} = 0,07$ տուժ/մ³, $X_{\Delta y_1} = 0,63$ մ, $z_{\Delta y_1} = 1,28$ մ, $z_{\Delta y_2} = 1,0$ մ, $x_{\Delta y} = 0,37$ մ, $\varphi = 30^\circ$ մեծությունները, որոշվել են.

$$P = \frac{\gamma_{\delta} H^2 \cdot 1}{2} \cdot tg^2 \left(45^\circ - \frac{\varphi}{2} \right) = 0,182 \text{ տուժ} = 1,82 \text{ կՆ}, \quad (86)$$

$$G = \gamma_h \left(\frac{b+B}{2} H \right) \cdot 1 = 0,252 \text{ տուժ} = 2,52 \text{ կՆ}: \quad (87)$$

Հենապատի կտրվածքում շոշափող ուժը որոշվել է հետևյալ բանաձևով՝

$$T = \int_0^H \tau_{xz} dz = \frac{\gamma_h}{2} \int_0^H \frac{z^2 dz}{b + Kz} = \frac{\gamma_h}{2} \left\{ \frac{1}{K^2} \left[\frac{1}{2} (b + Kz)^2 - 2b(b + Kz) + b^2 (\ln(b + Kz)) \right] \right\} \Big|_0^H = \quad (88)$$

$$= \frac{\gamma_h}{2} \left\{ \frac{1}{K^3} \left[\frac{1}{2} ((b + KH)^2 - b^2) - 2b(b + KH - b) + b^2 \ln \frac{b + KH}{b} \right] \right\}:$$

Համապատասխան մեծությունների արժեքները տեղադրելուց հետո, ստացվել է՝ $T = 1,31$ կՆ:

Պատերի շրջման և սահքի գործակիցների հաշվարկները ցույց են տվել,

$$K_{\text{շրջ}} = \frac{\sum M_{uy}}{\sum M_{\text{շրջ}}} = \frac{G(B - x_{\Delta y}) + 2Tz_{\Delta y_1}}{Pz_{\Delta y_2}} = 4,89 > 2, \quad (89)$$


$$K_{\text{սահ}} = \frac{\sum Q_{uy}}{\sum P_u} = \frac{fG + 2T}{P} = 1,99 > 1,5: \quad (90)$$

Երկու դեպքում էլ պաշարի գործակիցները մոտ երկու անգամ մեծ են թույլատրելի գործակիցներից:

ИГК-30Б մանրիչ մեքենայի ընդունման խցիկից մանրացված ծղոտը մինչև ամբար տեղափոխվելիս անցնում է երեք տեղամասեր՝ մանրացման խցիկի, խողովակաշարի ուղղաձիգ և կոր մասերի: Դիտարկվել են ծղոտի շարժման փուլերը, որոնց պարզաբանումները հնարավորություն են տվել ճշտել ծայրապանակների տեղադրման լավագույն տեղը:

ИГК-30Б մանրիչի թիակներն ուղիղ են (շառավղի ուղղությամբ), արտադրողականությունը 3 տ/ժ է, աշխատանքային օրգանի պտուտաթվերը՝ 970 պտ/րոպ, շառավիղը՝ 0,58 մ, չորս հակադիր թիակների մեկ պտուտի ժամանակ յուրաքանչյուր թիակից խողովակաշարին մատուցվում է 13 գ մանրացված ծղոտ:

Սանրացման խցիկում (նկ. 35) հաշվարկվել է թիակից պոկվելու պահին ծղոտի շարժման արագության վեկտորը:



Նկ.35. Արագությունների հաշվարկման սխեման:

Բոլոր ուժերը պրոյեկտելով թիակի երկարությանը անցնող առանցքի վրա, ստացվել է.

$$m \frac{d^2 U(t)}{dt^2} = mg \cos \alpha t - f m g \sin \alpha t - F_f - F_w, \quad (91)$$

որտեղ f -ը թիակի նկատմամբ սահքի շփման գործակիցն է ($f = 0,4$), F_n -ն՝ դիմադրության ուժը ($F_f = K \dot{U}(t)$), F_w -ն՝ սեղմված ծղոտի առաձգականության ուժը ($F_w = CU(t)$), K -ն՝ դիմադրության գործակիցը, C -ն՝ առաձգականության գործակիցը:

Համապատասխան մեծությունները տեղադրելուց և ձևափոխություններից հետո (91) հավասարումն ընդունել է հետևյալ տեսքը.

$$m \frac{d^2 U(t)}{dt^2} + K \frac{dU(t)}{dt} + CU(t) = mg(\cos \alpha t - f \sin \alpha t): \quad (92)$$

Հավասարումը (92) լուծելուց և ձևափոխումներից հետո ստացվել է.

$$\begin{aligned} \frac{dU(t)}{dt} = V_h = -ne^{-nt} \left[A \left(\sin \bar{\omega} t - \frac{\bar{\omega}}{h} \cos \alpha t \right) + B \left(\cos \alpha t + \frac{\bar{\omega}}{h} \sin \alpha t \right) \right] - \\ - \frac{g \bar{\omega}}{(\omega_0^2 - \omega^2)^2} \left[2n\omega + f(\omega_0^2 - \omega^2) \right] \cos \bar{\omega} t - [(\omega_0^2 - \omega^2) - 2f n \omega] \sin \alpha t, \end{aligned} \quad (93)$$

որտեղ՝

$$A = \frac{g}{(\omega_0^2 - \omega^2)^2 (\bar{\omega} - n)} \left\{ (1 + f) \bar{\omega} + n \right\} (\omega_0^2 - \omega^2) + 2n\omega \left[(1 - f) \bar{\omega} - fn \right]: \quad (94)$$

$$B = -\frac{g}{(\omega_0^2 - \omega^2)^2} \left[(\omega_0^2 - \omega^2) - 2fn\omega \right]: \quad (95)$$

Ցանկացած φ անկյան տակ կարելի է որոշել ծղոտի բացարձակ արագությունը թիակից պոկվելու պահին:

Բացարձակ արագությունը մոտավորապես ստացվել է 61 մ/վ: Սա մեծ արագություն է և անպայման թիակի կողմից դեպի խողովակաշար մատուցվող ծղոտի չնչին գանգվածը՝ $m = 0,052$ կգ/պտ, առանց խողովակաշարի պատերին կաշելու թիակների թևերի կողմից առաջացրած օդի հոսանքով ուղղաձիգ կբարձրանա վերև (նկ. 36):


Այդ դեպքում ծղոտի մասնիկի շարժման հավասարումը ստացվել է՝

$$m \frac{dV}{dt} = -mg - nV, \quad (96)$$

Դիֆերենցիալ հավասարումը լուծելուց ու պարզեցնելուց հետո, ստացվել է.

$$V = \frac{1}{k} \left[(g + kV_0) e^{-kt} - g \right]: \quad (97)$$

Ստացված արտահայտությունը (97) հնարավորություն է տալիս որոշելու մասնիկի շարժման արագությունը խողովակի առանցքով դեպի վեր շարժվելիս:



Նկ. 37. Ուղղաձիգ խողովակում ծղոտի շարժման արագության հաշվարկային սխեմա:

Ուղղաձիգ խողովակաշարի վերջնամասում ծղոտի հոսքը խառը վիճակով բարձրանում է վերև, ուստի խողովակի երկու կողմերում սրկող ծայրապանակները տեղադրվել են այնպիսի դիրքով, որպեսզի լուծույթի շիթերի մեծ մասն ուղղվի դեպի ծղոտի հոսքի մեջ:

Ծղոտը խողովակաշարի կոր մասով շարժվելիս կենտրոնախույս ուժի ազդեցության տակ ճնշում է գործադրում կոր պատի վրա և միաժամանակ հաղթահարելով շփման ու ծանրության ուժերը սահելով դուրս է գալիս:

Կատարվել են նաև քիմիական լուծույթի պատրաստման ու մղման մեքենաների և սարքավորումների հաշվարկը:

Քիմիական լուծույթի պատրաստման ու մղման համակարգը բաղկացած է (նկ. 32). բաքից, պոմպից, մղող խողովակից, հետադարձ խողովակից, լուծույթի մղման խողովակի փականից, հետադարձ խողովակի փականից,

մանոմետրից: Որոշվել են դրանց պարամետրերը:

Բաքի անհրաժեշտ ծավալը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$V_p = \frac{W_{\text{ծ.}} \cdot t_{\text{ծ.}} \cdot q}{1000} \text{ մ}^3, \quad (98)$$

որտեղ $W_{\text{ծ.}}$ -ն ծղոտամանրիչ մեքենայի արտադրողականությունն է (ըստ գիտափորձերի՝ $W_{\text{ծ.տն}} = 1,26$ տ/ժ), $t_{\text{ծ.}}$ -ն՝ ծղոտամանրիչի աշխատանքի տևողությունը տվյալ ցիկլում ($t_{\text{ծ.}} = 2,9$ ժամ), q -ն՝ 1 տ ծղոտը թրջող քիմիական լուծույթի քանակը ($q = 32$ լ/տ):

Համապատասխան արժեքները (98)-ում տեղադրելուց հետո, ստացվել է. $V_p = 117$ լ: Ելնելով գործընթացի առանձնահատկությունից, ընդունվել է $V_p \approx 150$ լ:

Առաջարկվել են բանաձևեր լուծույթի պահանջվող խտությունը, պահանջվող խտությամբ լուծույթ և մայր լուծույթի և դրա նոսրացման համար ջրի զանգվածը որոշելու համար:

Գիտափորձերի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ 1,2 մմ տրամագծի անցքերով և ծղոտի մանրվածքի հոսքի ուղղությամբ $10-15^0$ թեքությամբ տեղակայված ցնցողի դեպքում քիմիական լուծույթի մղման լավագույն ճնշումը $(0,1-0,6) \cdot 10^5$ Պա է, որի ընթացքում լուծույթի ելքը կազմում է $35-110$ լ/ժ:

Հիդրոհամակարգի համար ընտրվել է կենտրոնախույս պոմպ: Կատարված հաշվարկներով էլեկտրաշարժիչի հզորությունը ստացվել է 370 Վտ:

Ծղոտի քիմիական մշակման հաշվարկված, պատրաստված ու կառուցված համակարգի գիտափորձերը և արտադրական փորձարկումները կատարվել են արտադրության պայմաններում՝ Բալահովիտի ուսումնասիրվող արարական տնտեսությունում: Նպատակն է եղել. ստուգել առաջարկվող համակարգի աշխատունակությունը՝ ծղոտի մանրացման, լավագույն մանրվածքի ստացման ու լուծույթով հավասարաչափ թրջման, ներծծման հնարավորությունները և ամբարը լցվելուց հետո ծղոտե հակերով պատրաստված պատերի կայունությունը: Այդ ամենից հետո՝ որոշվել են համակարգի արտադրողականությունը, էլեկտրաէներգիայի տեսակարար ծախսը և ճշտվել շահագործման ռեժիմները:

Գիտափորձերի ամփոփված տվյալների հիման վրա կառուցվել են համապատասխան գրաֆիկներ: Դրանց վերլուծության արդյունքում ստացվել են գործնական նշանակություն ունեցող տվյալներ:

Կուպիտ կերերի մանրիչին սպասարկող բանվորների թիվը 1 -ից մինչև 5 -ը փոփոխելիս արտադրողականությունը մեծանում է 476-2513 կգ/ժ, իսկ էլեկտրաէներգիայի ծախսը՝ մկազում՝ 0,063-0,012 կՎտ.ժ/կգ:

Գիտափորձերով որոշվել է նաև ծղոտի հավասարաչափ թրջվելու որակը: Այն մեծանասամբ կախված է մանրացնող մեքենայի արտադրողականությունից (կգ/ժ), թրջող լուծույթի տեսակարար ծախսից (լ/տ) և լուծույթի շիթի մասնիկների մեծությունից:

Պարզվել է, մանրվածքի չափից կախված, ծղոտի խոնավություն կլանելու աստիճանը:

Գիտափորձերը և արտադրական փորձարկումները ցույց են տվել, որ ծղոտի 2-5 սմ մանրվածքի խոնավակլանելիությունը, լուծույթի բոլոր նորմերի դեպքում, բավականին հաջող է եղել:

Հետազոտվել են նաև ծղոտի ֆիզիկամեխանիկական հատկությունները մինչև թրջվելն ու թրջվելուց հետո: Որոշվել են ծղոտի խոնավությունը, պողպատի նկատմամբ շփման գործակիցն ու կաշտնության ուժը:

Խողովակաշարում լուծույթի ճնշումից կախված տարբեր չափսի անցքերով ծայրապանակներից լուծույթի ելքի լաբորատոր գիտափորձերը կատարվել են ՀԱԱՀ հիդրավլիկայի ամբիոնի լաբորատորիայում:

Փորձարկվող ծայրապանակները եղել են $d_0=0,8-1,5$ սմ տրամագծի անցքերով:

Ճնշումը փակամի օգնությամբ փոփոխվել է $(0,1-0,8) \cdot 10^5$ Պա սահմաններում:

Գիտափորձերի արդյունքների հիման վրա կառուցվել է գրաֆիկ: Այն ցույց է տալիս խողովակաշարում ճնշումից, ծայրապանակների անցքերի տրամագծից ու ժամանակից կախված ծայրապանակներից սրկվող լուծույթի ելքը:

Գիտափորձերի ընթացքում ծղոտամբարի պատերի կայունությունը բոլորովին չի խախտվել: Մեքենասարքավորումների աշխատանքի ժամանակ խափանումներ չեն առաջացել:

Ըստ ժամանակաչափումների միջին ցիկլային արտադրողականությունը ստացվել է 923 կգ/ժ, հերթափոխային արտադրողականությունը՝ $Q_{\text{երթ}} = 4,34$ տ/հ, հերթափոխի ժամանակի օգտագործման գործակիցը՝ $\tau = 0,59$, էլեկտրաէներգիայի ծախսը՝ $\Theta_{\text{էլ.ժ.}} = 0,03$ կՎտ.ժ/կգ:

Ծղոտահակերով պատրաստված ամբարում ծղոտը քիմիական եղանակով մշակման ու սննդարարության բարձրացման նոր համակարգի արտադրական փորձարկումները ցույց են տվել, որ այն լավագույն տեխնոլոգիական, տեխնիկական, շահագործական և տնտեսական ցուցանիշներ ունի, հեռանկարային է և հաջողությամբ կրուծի ծղոտի արդյունավետ օգտագործման խնդիրը:

Հինգերորդ բաժնում բերված են լեռնային բնական խոտհարքներում կերհավաք մեքենաների շահագործական հուսալիության վիճակը և բարձրացման հնարավորությունները:

Հետազոտությունները կատարվել են Կոտայքի մարզի բնական խոտհարքների «Ելիջա»-ի տարածքում վերջին չորս տարիների (2011-2014 թ.թ.) հուլիս-օգոստոս ամիսներին՝ քարքարոտ և քարերից հավաքված տարածքներում:

Ամերժ աշխատանքի և վերականգնման հաշվարկված պարամետրերի համատեղ վերլուծությունը և կառուցված գրաֆիկների համարումը հնարավորություն է տվել բացահայտել կերհավաք մեքենաների համեմատաբար ցածր հուսալիու-

թյամբ հանգույցներն ու մեքենամասերը և միջոցառումներ մշակել այդ մեքենաների հուսալիությունը բարձրացնելու ու շահագործական ցուցանիշները բարելավելու համար:

Հերթափոխի տևողությունը նախատեսվել է 10 ժամ, մաքուր աշխատանքի տևողությունը տատանվել է 5,1-6,0 ժամի սահմաններում: Երեք տարվա հետազոտությունների ընթացքում լիարժեք խոտհավաքի ընդհանուր օրերի թիվը եղել է 118 օր: Այդ ընթացքում, մինչև քարերի հավաքելը, KC-2,1Դ հնձիչի մոտ հանդես են եկել 284 մերժ, «Holland» ֆիրմայի հնձիչի մոտ՝ 277 մերժ, ԳՄՄ-6,0Դ լայնակի փոցխի մոտ՝ 226 մերժ, ՍԿ-1,6 մամլիչ-հավաքիչի մոտ՝ 214 մերժ:

Կերհավաք մեքենաների արտադրական փորձարկումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց շահագործական հուսալիությունը ցածր է:

